ՀԱՄԱՊԵՏՈՒՆ ՆԵԶԱՅՈՒՆՈՒՆ ԳԱՂԹՈՂԱԿԱՆ

ԷՀՈՒՆ
ՆԵՐՍԻՍՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՉԱՈՒՇԻ
ՍՊԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԵՂԾՎԱԾԸ

Հեղինակ՝ Ա. Ա. Ներսիսյան
Խմբագիր՝ Գ. Գ. Դալլաքյան
Վերստուգող սրբագրիչ՝ Կ. Ա. Տոնոյան

Պատմաբան Աշոտ Ներսիսյանի «Գևորգ Չաուշի սպանության առեղծվածը» գիրքը հրատարակվել է 1992 թվականին, Երևանում, «Հայաստան» հրատարակչության կողմից, 30,000 օրինակով:

Գրքի այս էլեկտրոնային հրապարակումը, մեր կողմից կցված հավելյալ տվյալներով, ևս մի փորձ է հանրության սեփականությունը դարձնելու այս կարևոր նյութը, նկատի ունենալով, որ, դժբախտաբար, շարունակվում են բազմիցս հերքված Գևորգ Չաուշի մահվան շուրջ պտտվող ավելի քան 100 տարեկան շահարկումները: Դրանք այլևայլ առիթներով օգտագործվում են Հայաստանի Ա. Հանրապետությունը կերտած գործիչների՝ մասնավորաբար Ռուբենի (Մինաս Տեր Մինասյան) և իր միջոցով Հայաստանի պետականության վերակերտման մեջ մեծագույն ներդրումը ունեցած ուժի՝ Հայ Յեղափոխական Դաշնակցության անունը սևացնելու գործունեության շրջանակներում:

Գիրքը վերահրապարակում ենք նույնությամբ:

ՀՅԴ Հանրային Կապերի Գրասենյակ
Մայիս 2021

ԱՌԱՋԱԲԱՆ

Գոյություն ունի հայ ազգային-ազատագրական շարժման պատմության ըմբռնման բոլոր ճանապարհները փակելու բավական ստույգ երկու եղանակ. Առաջինը՝ նրան անզսպելի ներբողներ կարդալն է, երկրորդը՝ ամբողջովին այն ժխտելը: Առաջին դեպքում հետազոտողի հայացքից վրիպում են շարժման ինչպես վերջնական խնդիրներն ու կոնկրետ արդյունքները, այնպես էլ նրա ներսում տեղի ունեցող խորքային գործընթացները, որոնք հաճախ ունենում են չափազանց հակասական բնույթ և շարժումը հանգեցնում են ողբերգական ճգնաժամերի: երկրորդ դեպքում հետազոտողը համակարգչի սառնասիրտ հայացքով զննում է շարժման ամբողջ հերոսականությունն ու զոհողությունը և, հաշվապահի նման, իր համրիչի վրա հաշվում է նրա միայն վերջնական արդյունքը, մոռանալով, որ ամեն մի շարժում էլ ոչ միայն արդյունք է, այլև մի գործընթաց, որի ընփացքում առնականանում ու ամրապնդվում է ազգի ոգին, ինչն արդեն ինքնին հայկական նվաճում է:

Ժամանակակից հայ պատմագիտության առաջնահերթ խնդիրն է՝ ստեղծել անաչառ ուսումնասիրություններ, որոնք ազատ կլինեն այդ երկու մեծ սխալից:

Նման կարգի առաջին փորձը Աշոտ Ներսիսյանի ներկայացրած աշխատությունն է:

Իր ծավալով բավական փոքրիկ գրքույկում հեղինակը հետազոտում է առասպելական հայդուկ Գևորգ Չաուշի մահվան պատճառներն ու հանգամանքները, որն առաջին հայացքից տեղային բնույթ ունի: Բայց գրքույկում բարձրացված հիմնահարցը մեծ սառցալեռան ընդամենը տեսանելի մասն

է: Իրականում գիտնականը բարձրացնում է նոր լուրջ հիմնահարցի մի ամբողջ շերտ, ինչը և կազմում է այդ սառցալեռան ստորջրյա մասը:

Խօսքը հայ հայդուկության տեսության ու պրակտիկայի՝ XX դարի սկզբում սկսված հոգեվարքի մասին է: Գաղափարները, ինչպես և մարդիկ, իրենց զարգացման մեջ ունեն երեք հիմնական փուլեր. ծնունդ, հասունություն, մահ: XIX դարի վերջում առաջացած հայ հայդուկությունը այս առումով բացառություն չի եղել: Հայ հայդուկների հերոսական, անձնազոհ, բայց, ավաղ, անջատ-անջատ, առանց միասնական հստակ պլանի գործողությունները ժամանակի ընթացքում խոչընդոտ դարձան մեր ազգային-ազատագրական պայքարի հաջողության ճանապարհին:

Հայ հեղափոխականների շրջանում աստիճանաբար սկսել էր բյուրեղանալ պայքարի նոր այլընտրական ձևի՝ համընդհանուր ապստամբության գաղափարը, որի ջատագովներից էր ՀՀԴ-ից նոր սերնդի ականավոր ներկայացուցիչ Ռուբենը (Մ. Տեր Մինասյանը):

Գաղափարների պայքարն ունի ոչ միայն գաղափարաքաղաքական, այլ հսկայական չափով նաև հոգեբանական հընչեղություն: Չէ որ ամեն մի գաղափարի հետևում կանգնած են կենդանի, կոնկրետ մարդիկ, և այլ մարդկանցից յուրաքանչյուրն ունի իր սեփական հոգեբանական նկարագիրը, աշխարհայացքը, բարոյականությունը: Գաղափարների ընդհարումը բացարձակ մակարդակում հանգեցնում է մեկի հաղթանակին և մյուսի պարտությանը, իսկ առօրյա մակարդակում՝ հաղթանակած գաղափարը կրողների վերելքին և պարտության կրած գաղափարը կրողների կենսական դրամային:

Հենց այդպես պետք է դիտել Ռուբեն-Չաուշ դիմակայությունը՝ նոր ազգային մտածողության և հնի, նոր հոգեբանության և հնի դիմակայությունը: Դա եղել է մեր շարժման մեջ եղած երկու սկզբունքի՝ բանական սկզբունքի և հուզական սկզբունքի պայքար: Հաղթանակել է բանականությունը:

Հայդուկության՝ որպես ազգային ազատագրության նվաճման ձևի ու միջոցի կործանումը միաժամանակ նշանավորում էր նաև հայդուկների կենսական անձնական ողբերգու-

թյուն: Հպարտ գերմարդիկ, որոնց անունները դեռ նրանց կենդանության ժամանակ փառաբանվում էին երգերում ու լեգենդներում, որոնք արդեն վաղուց իրենց գիտակցության մեջ մշակել էին մարտական գործելակերպի մեկ որոշակի ստերեոտիպ, պետք է վերակառուցվեին, հաղթահարեին իրենց սեփական եսը, սեփական փառքը և դառնային մի շարքային լծակ՝ նախապատրաստվող համընդհանուր ապստամբության բարդ մեխանիզմում: Հանուն ազգային շահերի անհատականը պետք է ժամանակավորապես տարրալուծվեր զանգվածայինի մեջ, քանզի այդ է համընդհանուր ապստամբության հաջողության գինը:

Հայդուկներից քչերը միայն կարողացան հաղթահարել հոգեբանական այդ անջրպետը: Այդ բանը չկարողացավ անել Գևորգ Չաուշը: Պայքարի նոր փուլում իր ենթադրյալ ավելորդությունից ցնցված, հերոսը հոգեբանականորեն խորապես ընճվեց: Նա կորցրեց կյանքի իմաստը՝ մարդու հոգեկան աշխարհի հիմքերի հիմքը: Ունայնացած հոգով, Չաուշը գիտակցաբար մահ էր փնտրում և, ի վերջո, գտավ այն: Քանզի գաղափարները միայնակ չեն մեռնում, նրանք իրենց հետ տանում են նաև իրենց առավել կրակոտ կողմնակիցներին: Չաուշի մահը նշանավորում էր հայ հայդուկության մահը:

Ընթերցողը կհարցնի՝ իսկ ի՞նչ եղավ սառցալեռան գագաթը՝ Չաուշի մահվան գաղտնիքը: Չէ որ կա մի վարկած, որը Ռուբեն-Չաուշ գաղափարահոգեբանական դիմակայությամբ նենգափոխում է անձնական դիմակայությամբ և բացահատորեն մեղադրում է Ռուբենին՝ Չաուշի մահվան համար:

Այս վարկածը սնանկ է, և դրա սնանկությունը փաստական հարուստ նյութի հիման վրա հիանալի տվել է սույն գրքույկի հեղինակը: Մեր կողմից կավելացնենք միայն հետևյալը. յուրաքանչյուր մեռնող գաղափար պարտադիր աշխատում է վրեժխնդիր լինել հաղթանակած գաղափարից: Այդ վրեժխնդրության ձևերը լինում են միանգամայն տարբեր, այդ թվում և հաղթանակող գաղափարը կրողներին վարկաբեկող առասպելների ձևով: Այդպես է ծնվել առասպելը Ռուբենի հանցավոր գործողության մասին:

Սակայն Ռուբենը եղել է գաղափարի մարդ, նրա գաղա-

փարական զինանոցում ընդդիմախոսի բռնի վերացման ծրագիր չի եղել։ Ռուբենի մեղքը չէ, որ իր գաղափարների անվրեպ նետերը դիպան հերոսի վիթխարի, բայց և մանկականորեն պարզ ու անպաշտպան սրտին։ Պատմությունը չի լինում առանց գաղափարների պայքարի, իսկ պայքարը՝ առանց ողբերգությունների։ Այսպիսին են պատմական առաջադիմության օրենքները։

ՌՈՒԲԵՆ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ԳԵՎՈՐԳ ՉԱՈՒՇԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԵՂԾՎԱԾԸ

1906 թ. ամռանը Վանի Հ. Հ. Դաշնակցության պատասխանատու գործիչները մի անակնկալ նամակ ստացան։ «Իմ հոգս չէ,– գրում էր հեղինակը,– այսօր կամ վաղը ես ևս պիտի սպանվեմ։ Պարզ է ինձ համար, որ իմ վերջը եկած է, թեև, եթե ուզենամ ամենուն պես լքել ժողովուրդը և հեռանալ, ես ալ իբր հերոս երկար, շատ երկար տարիներ կրնամ ապրիլ։ Ես հուսահատ եմ ամենքեն, բացի ձեզմե։ Իմ խընդրանքն է, որ անպայման մեկը ձեզմե ճամփեք այս երկիրը։ Այդ ընկերը կամ կը հասնի իմ ողջությանը, կամ չի հասնի, այդ միևնույնն է։ Ճամփեցեք մեկը, որ այս ժողովրդին գլուխն անցնի[1]»։

Նամակի հեղինակը Գևորգ Չաուշն էր, բայց ի՞նչն էր ստիպել նրան՝ գրելու այն։ Այս հարցին պատասխանելու համար հարկ է փոքր-ինչ անդրադառնալ Սասունի 1904 թ. ինքնապաշտպանությունից հետո տիրող կացությանը։

Հայտնի է, որ Սասունում կռվող հայդուկները 1904 թ. ամռանը, Անդրանիկի գլխավորությամբ, նահանջեցին դեպի Վան։ Աղթամարի խորհրդակցությունը, որին ներկա էին Կոմսը (Վահան Փափազյան) և Իշխանը (Նիկոլ Պողոսյան), գտավ որ «...ժողովուրդը սրտապնդելու համար պետք է, որ ժողովուրդին սերն ու վստահությունը վայելող մեկը փոքր խմբով մը վերադառնա, նրան պետք է տրամադրել գումար մը և

---

1. Արամ-Ռուբեն– Հայ հեղափոխականի մը հիշատակները, հ. Բ (2), Լոս-Անճելս, 1952, էջ 388

ռազմամթերք, սակայն ամեն կերպ ընդհարումներե խուսափելու պայմանով»[2]:

Երկար լռությունից հետ Տարոն վերադառնալու ցանկություն է հայտնում Գևորգ Չաուշը: Նա 17 հոգուց բաղկացած խմբով, որի մեջ էր Կորյունը, նստելով նավ, ափ է իջնում Ախալթի Կծվակ գյուղում, ուր գիշերը կռվի բռնվելուց և Մոկացի Աստուրին զոհ տալուց հետո անցնում է Նեմրութ, որտեղից էլ՝ Գրգուռով Տարոն[3]:

Կարծում ենք, որ Գևորգի Տարոն վերադառնալու որոշումը ճիշտ չէր: Այն պայմաններում, երբ Տարոնը նոր էր ապրել հարստահարությունների և ջարդերի սարսափները, ոչ մի անհրաժեշտություն չկար կրկին այնտեղ ուղարկելու Գևորգին, մի անձնավորություն, որն իր կյանքը չէր պատկերացնում առանց հայդուկային կռիվների: Անհրաժեշտ էր, թեկուզ մի քիչ ուշացումով, Տարոն ուղարկել այնպիսի գործիչ, որը գործեր հայ ազգային-ազատագրական պայքարի անցած ուղու ճշմարիտ գնահատականով և անհրաժեշտ եզրակացություններով: Տարոնի Հ. Հ. Դաշնակցության գլխավոր դեմքն էր մնում Գևորգ Չաուշը, որը նույն Դաշնակցության կողմից 1904 թվականից հետո, առանց վաղաժամ մասնակի ընդհարումների, գաղտնորեն զինվելու և նախապատրաստվելու ուղին վերջնականապես որդեգրելու պայմաններում, դառնում էր կործանման դատապարտված և ողբերգական կերպար: Հիրավի, Տարոն էր վերադառնում երբեք ղեկավար լինելու ձգտումներ չունեցող, փառատենչությունից զերծ, բայց իր կյանքն առանց կռիվների չպատկերացնող մի անձնավորություն և այն դեպքում, երբ որպես ազատության հասնելու միջոց Տարոնի ժողովրդի աչքում իրեն սպառել էր հայդուկային պայքարը: Տվյալ իրավիճակում անհրաժեշտ էր Հրայրի (Արմենակ Ղազարյան) կազմակերպչական ընդունակություններն ունեցող մեկը, իսկ Գևորգը դրանցից հեռու էր: Նա կազմակերպչական աշխատանքներ տանում էր, սակայն կռիվների որոնումներով: Մինչդեռ

2. «Վեմ»– երկամսյա հանդես մշակույթի և պատմության, Փարիզ, 1935, էջ 62
3. Տե՛ս «Դրօշակ», N 7, հուլիս, 1905

Նկ. 1. Գևորգ Չաուշ

մասնակի ընդհարումներից ժողովուրդը միշտ խուսափել էր, և այժմ էլ խուսափում էր Հ. Հ. Դաշնակցությունը։

Ահա այդ մասին իր հուշերում ինչ է գրում Արամ Մանուկյանը. «90-ական թթ. սկզբի տարիների ձեռնարկները, Սասունի ապստամբությունը, սուլթանի մահափորձը և այլն, այդ օրերին համարվում էին այլևս անբավարար մեր հարցի լուծման համար։ Ավելին կար. պնդում էին, որ երկրի այս կամ այն ծայրում ասուպի պես երևացող այդ մասնակի ձեռնարկները փայլում, անցնում էին։ Մի Սասուն, մի Զեյ-

թուն, մի Պոլիս զատ-զատ չպիտի շարժվեին, այլ բոլոր կա. ըևոր քայլերը պիտի կազմակերպվեին, ուժ կենտրոնացնեին և ստեղծեին մի հսկա զանգվածային շարժում երկրի մի ծայրից մյուսը»[4]:

Ինչպես պարզ է այս մեջբերումից, Դաշնակցությունը վերջնականապես թեքվել էր դեպի համազգային ապստամբության կազմակերպման ուղղությունը, որը դեռևս 1895 թ. որդեգրել էր Հրայրը: Այս բոլորից ելնելով, չի կարելի չմեղադրել Կոմսին, որ վերոհիշյալ ըմբռնումն ունենալով, արգելք չի ծառայել Գևորգի՝ Տարոն վերադառնալու որոշմանը: Թեպետ, չպետք է մոռանալ նաև, որ սոսկ Կոմսի վերաբերմունքով չէ, որ դա պայմանավորված էր: Չէ որ հազիվ է հաջողվում չեղյալ համարել բոլոր հայդուկների կրկին Տարոն վերադառնալու որոշումը: Ինչ վերաբերում է Գևորգին, ապա Տարոն դառնալու վճիռն ընդունելով, նա մեկ անգամ ևս արտահայտում էր իր անմնացորդ սերն ու նվիրվածությունը ժողովրդին: Անասելի խիզախ նկարագրի տեր անձնավորությունը միայն կհանդգներ նման համարձակ քայլ կատարել, քանզի, եթե հաշվի առնենք Տարոնում տիրող կացությունը, ապա պետք է ընդունենք, որ վերադարձ այնտեղ, նշանակում էր գնալ մահվան ընդառաջ: Վերադառնալով Տարոն, Գևորգն ու Կորյունը Մառնիկ սարի վրա ժողով են գումարում, որին մասնակցում են Մակարը, Զոլոն, Մորուք Կարոն, Գալեն և ուրիշներ: Ժողովը որոշում է «...ամեն գնով խուսափել կռվե և հանգիստ պահել Տարոնի աշխարհը, մխիթարել և հուսադրել հուսալքված ժողովուրդը, ըստ կարելվույն մեղմացնել հարստահարությունները և թույլ չտալ, որ ժողովուրդը զինաթափ ըլլա: Գևորգի համար կորոշվի հետևյալը. քանի որ ան կառավարության աչքի փուշն է դարձած, ուստի կռվե խուսափելու համար պետք է մնա լեռներու մեջ ֆետայիներու մեծ մասին հետ և պիտի ձեռք առնե միջոցներ՝ զսպելու քրդերը և դաբիլաթները, առանց, սակայն, գործը արյունահեղության հասցնելու: Կորյունի համար կորոշվի, որ նա մնա ժողովրդի մեջ և զբաղվի կազմակերպչական և զեն-

4. Հուշեր, գրեց՝ Արամ, «Հայրենիք», N 11, սեպտեմբեր, 1923, էջ 133

քերու փրկության գործով։ Սասունցի զինվորներու համար կորոշվի, որ Մակարի հետ միասին մնան Գևորգի քով, իսկ Կորյունի հետ դաշտ իջնեն քանի մը ծանոթ ու զգույշ զինվորներ»[5]։

Կորյունը, որ միշտ եղել է Հրայրի հնազանդ զինվորը, փորձում է գործել նրա սկզբունքներով։ Իջնելով Մշո դաշտ, նա, նախ և առաջ, հավաքում է ամբողջ զենքը և պահում ապահով տեղեր՝ ժողովրդին սովորեցնելով, որ հայտնի կառավարությանը, թե Գևորգն ու Կորյունը բռնությամբ զենքերը հավաքել են։ Այնուհետև, Կորյունը «կը վերակազմե կուսակցությունը Հրայրի մեթոդով, կը պայքարի Կոտան Ալայ բեկի բռնությանց ու զինահավաքման դեմ, կապ կը հաստատե քյուրտերու հետ և համագործակցության դաշինք կը կնքե. կանցնի Բինկյոլ խորմընկեցի աշիրեթապետ Նիյազիի մոտ և կը կազմակերպե մարտական կոմիտե։ Հետո կերթա Խնուս կազմակերպական գործերով»[6]։

Սակայն, Կորյունը երկար գործունեության չի ունենում և 1905 թ. անցնում է Կովկաս, Գևորգին գրելով հետևյալը միայն՝ «Սիրելի Սարհատ, ես գնացի, համբույրներով՝ Կորյուն»[7]։

Կորյունի հեռանալը պայմանավորված էր նրա կողմից Գևորգի գործելակերպի անընդունելիությամբ (եթե նա ձըգտում էր նախապատրաստել խաղաղ և գաղտնորեն՝ ձգտելով ամեն կերպ շահել քրդերի համակրանքը, ապա Գևորգը 1905 թ. գարնանից դիմում էր սպառնալիքի և ահաբեկության միջոցներին), ինչպես նաև իր կազմակերպչական աշխատանքների կրախով։ Տվյալ իրավիճակում Դաշնակցությունը տարված էր կովկասյան իրադարձություններով, Վանը կլանում էր Տարոն առաքվող զենքերի մեծ մասը, իսկ քրդերի չեզոքության միակ գրավականը հայերի զինումն էր։ Քանի որ Կորյունը չէր փայլում կազմակերպչի անհրաժեշտ հատկանիշներով, ուստի կազմակերպչական աշխա-

---

5. Ռուբեն, Հայ հեղափոխականի մը հիշատակները, հ. Գ (3), Լոս-Անճելս, 1951, էջ 338
6. «Դրօշակ», N 8-10 (225-257), օգոստոս-հոկտեմբեր, Փարիզ, 1936, էջ 251
7. Ռուբեն, նշվ. աշխատությունը, հ. Գ (3), էջ 347

տանքների դժվարությունները նրա մեջ ակամայից հող էին ստեղծում հայդուկյան գործելակերպի համար։ Ստացվում է, որ քննադատելով Գևորգին՝ Կորյունը հաճախ պետք է դիմեր նրա գործելակերպին։ Բացի այդ, նա չէր կարող Գևորգին պարտադրել որևէ ծրագիր. քանզի, որպես հայդուկ, Գևորգն ավելի հեղինակավոր էր։ Միակ ելքը մնում էր հեռանալ, որով էլ ավելի անելանելի կացություն էր ստեղծվում Գևորգի համար։ Իսկ ինչպես էր գործում Գևորգը։ Սկսած 1905 թ. գարնանից, մի կողմից տեսնելով, որ առանց հայդուկների տված առիթների էլ կառավարությունը շարունակում է ջարդերը, նա որոշում է հակահարված տալ, հասկանալով հանդերձ, որ իր գործելակերպն իրավիճակը չի կայունացնում։ Ժողովրդի օգտակար լինելու ձգտումը և իր ընտրած պայքարի միջոցներով այդ ձգտումն իրականացնելու անհնարինությունը ծնում էին նրա մեծ ողբերգությունը։

Հայդուկային շարժումը մտնում էր իր վերջին, ճգնաժամային փուլը։ Ինչպես վկայում է Ռուբենը, Գևորգն սկսում է գործել հետևյալ սկզբունքներով. «Ա. պայքար զենքի ուժով մինչև արյունահեղություն այն ղաբիլաթներուն դեմ, որոնք կը ճնշեն ժողովուրդը։ Բ. սպառնալիքով և գինու զորությամբ կռիվ այն աշիրեթներուն դեմ, որոնք գործիք կը դառնան կառավարության ձեռքին։ Գ. անմիջական ճնշումներ կառավարության վրա, առանց դիմելու ապստամբության, որուն ոգին միշտ վառ պետք է պահել ժողովրդին մեջ և որուն սպառնալիքին տակ պետք է պահել կառավարությանը»[8]։

Պետք է նշել, որ այս սկզբունքով գործունեության բերած հաջողությունը կրելու էր ժամանակավոր բնույթ հետևյալ պատճառներով. 1) ժողովրդի մասնակիորեն զինված լինելու պայմաններում մեկ հայդուկային խմբի տարածած սարսափը կարող էր տևել այնքան ժամանակ, քանի դեռ կար այդ հայդուկային խումբը, 2) ամենուրեք տարածվող հողազավթումների դեմ հնարավոր էր պայքարի միայն համաժողովրդական ուժերով, 3) որոշ քուրդ աշիրեթներ, վախենալով Գևորգ Չաուշից, կարող էին բարեկամ ձևանալ

8. Ռուբեն, նշվ. աշխատությունը։, հ. Գ (3), էջ 348

նրան, բայց դա ևս ժամանակավոր բնույթ էր կրելու, որովհետև հայությունը գրեթե զինված չէր։

Կառավարության վրա ճնշում գործադրելու միակ միջոցը համընդհանուր ապստամբությունն էր։ Իսկ ինչ վերաբերում է ժողովրդի մեջ ապստամբության ոգին վառ պահելուն, ապա դրա համար միայն գաղափարը բավական չէ։ Դրա համար գաղափարական աշխատանքներին զուգակցիր անհրաժեշտ են զինման գործողություններ։

Նկ. 2. Ռուբեն Տեր-Մինասյան

Այս բոլորով հանդերձ, չի կարելի մեղադրել Գևորգին վերոհիշյալ սկզբունքների ընտրության համար։

Այդպիսին էին ազատագրական պայքարի նրա ըմբռնումները և այդպես պետք է գործեր նա։

Եվ Գևորգը 1905 թ. սկսեց իր գործունեությունն այնպես, ինչպես ինքը ճիշտ էր համարում։ Նա նախ հայդուկների միջոցով կազմակերպում է պայքար հողազավթումների դեմ։ Հայությանը հողազրկող և նրանց հողերին տեր կանգնող ղաբիլաթների (տոհմերի) առաջնորդներից ոմանց նա տեռորի է ենթարկում։ Գործադրելով սպառնալիքի միջոցը, Գևորգը կարողանում է հասնել որոշ քրդերի և աշիրեթների բարեկամությանը, բայց դա, ինչպես նշել ենք, կեղծ էր և կրում էր ժամանակավոր բնույթ։ Այդ հաստատում է Կ. Սասունին։ Նա գրում է. «Գևորգ Չաուշի սարսափը շատ տարածված էր Տարոնի շրջանի աշիրեթներուն մեջ, ու շատերը, ինչպես Ղասըմ բեկը, ճեպրանցի Դարվիշը, ճեպրանցի Կոկեն, ալմանցի Ֆաթեն, խոշկանցի Ռըզկոն, պալակցիները, պատգանցիները, բագրանցիներու Բըկեն ու հասնանցի Մեհմեդ Դաշտին բարեկամական վերաբերմունք սկսած էին ցույց տալ դեպի ֆետայիները։ Սակայն, երբ

հեղափոխական ուժը իրենց սահմաններեն հեռանար, անոնք իրենց շահատակությունները կը շարունակեին»[9]:

Գևորգը հատկապես սերտ հարաբերություններ է ստեղծում Մուսա բեկի եղբայր Ղասըմ բեկի հետ: Սակայն փաստերից եզրակացվում է, որ այդ բարեկամությունը կեղծ է եղել: Ղասըմը Գևորգին բարեկամ է ձևացել երկու պատճառով. առաջին՝ նրա իսկ նկատմամբ տածած վախի հետևանքով և նրան դավելու գաղտնի ցանկությամբ, երկրորդ՝ Հ. Հ. Դաշնակցության Դուրան-Բարձրավանդակի կենտրոնական կոմիտեի գաղտնիքներին հաղորդակից լինելու և կառավարությանը հայտնելու նպատակով:

1905 թ. ապրիլի 25-ին Գևորգ Չաուշը տալիս է իր հայդուկային մարտերի բարձրակետը հանդիսացող Խարսի կռիվը, որն, ամենայն հավանականությամբ, եղել է Ղասըմ բեկի մատնության հետևանքով: Խարսի կռվի նկարագրությունը մեր նպատակի մեջ չի մտնում: Սոսկ նշենք, որ այդ կռվում թշնամու կորուստները կազմել են ըստ Ռուբենի՝ 24 սպա և 60 զինվոր[10], ըստ կռվի մասնակից Մեսրոպ Շահնազարյանի՝ 60/70–սպանված և վիրավոր[11], ըստ Հարություն Սարգսյանի 45 սպանված և վիրավոր[12]:

Խարսի կռիվն ունեցավ հետևյալ հետևանքները:

1. Շեշտակիորեն բարձրացրեց Գևորգ Չաուշի՝ առասպելական և անպարտելի հերոսի համբավը: Շատ քրդեր և թուրքեր ձգտեցին շահել նրա բարեկամությունը՝ վախից, նրա անպարտելի լինելու համոզմունքից:
2. Լինելով ճգնաժամային փուլ մտած հայդուկային շարժումների վերջին հաղթական դրվագը, Գևորգ Չաուշին այն վերստին կողմնորոշեց դեպի հայդուկային գործելակերպը: Նրա մեջ եղած տատանումները վերջ գտան այդ գործելակերպի ընտրությամբ: Գևորգի անպարտելիության առասպելները սարսափ և զգուշություն առաջացրին ոմանց մոտ, իսկ

9. Կ. Սասունի, Քյուրտ ազգային շարժումները և հայ-քրդական հարաբերությունները (ԺԵ դարեն մինչև մեր օրերը), Պեյրութ, 1969, էջ 188
10. Տե՛ս Ռուբեն, նշվ. աշխատությունը, 1949, էջ 364
11. «Տարոնի արծիվ», N 27, 1949, էջ 20
12. «Սփյուռք» շաբաթաթերթ, Բեյրութ, N 8, 7 մարտի, 1971

նա դրանք գերագնահատելով՝ մղվեց որոշ անխոհեմ քայլերի, որոնք ճակատագրական եղան:

3. Շատերի մոտ ծնեց նման միջոցներով այլ տարրերի հետ համագործակցության հասնելու անհիմն եզրակացությունը:

Խարսի կռվով, սակայն, սկսվում է ինչպես Գևորգ Չաուշի, այնպես էլ Տարոնի հայդուկային շարժումների փառքի մայրամուտը: Այդ կռվից հետո Գևորգը փոքրիկ հեծելազորային խմբով շրջում է ամենուրեք և փորձում է կազմակերպչական խնդիրներ լուծել իր ըմբռնումների համաձայն: Ընդունում է այս կամ այն քրդի հրավերը, նրա հետ կերուխում է սարքում, ոմանց գիշերն այցելության է գնում և սպառնում, ոմանց գերում է, հետո բաց թողնում, ոմանց էլ տեռորի ենթարկում: Գևորգի նմանօրինակ արարքները դուր չեն գալիս Սասնո ծեր հայդուկ Սպաղանաց Մակարին, որը հայդուկներից ոմանց համոզում է չհետևել նրան և չգնալ այս կամ այն քրդի հրավերին: Անտեսելով Մակարի խորհուրդները, 1905 թ. հոկտեմբերի 1-ին Գևորգը 11 հայդուկով քուրդ Մահմադ աղայի հրավերով Մառնիկի լեռներից իջնում է Ալվառինջ՝ այնտեղից Խըվներ (Մշո Չխուրի շրջան)՝ Ղասըմ բեկի հետ հանդիպման գնալու համար: Նույն օրը Մահմադի մատնության հետևանքով նա տալիս է Ալվառինջի կռիվը, որը նրա հայդուկային կռիվների ամենատխուր և ողբերգական դրվագն էր: Կռվում զոհվում են հայդուկներից 9 հոգի, իսկ գուղից կոտորվում է 134 մարդ[13]: Գևորգը փրկվում է մի կերպ: Ըստ Ռուբենի, նրան փրկում է Ալվառինջի Խանիկը՝ թաքցնելով հարևան քրդի տանը: Գևորգը որոշ ժամանակ աթարների մեջ թաքնվելուց հետո մի քրդի ուղեկցությամբ բարձրանում է Մառնիկի սարը՝ Մակարի մոտ[14]:

Իսկ ըստ Հ. Սարգսյանի տեղեկության, Գևորգին փրկում է կռվում սպանված հայդուկ Ասատուրի կինը՝ Վառոն: Նա «...ուշ գիշերին հովվի թաղիք Գևորգի ուսերին գցած, առաջնորդում, անցկացնում է զինվորների արանքից, ապա հետ է դառնում»[15]:

---

13. Ռուբեն, նշվ. աշխատությունը, հ. Գ (3), էջ 371
14. Տե՛ս նույն տեղը
15. «Սփյուռք», N 7, 28 փետրվարի, 1972

Ալվադինջի ողբերգական կռիվը էլ ավելի խորացրեց հայդուկային շարժման ճգնաժամը, պառակտում ծնեց հայդուկների շրջանում: Այս կռվով Գևորգն համոզվեց, որ իր գործելակերպի բերած հաջողությունները խաբուսիկ են: Շատերի աչքում Գևորգը կորցրեց իր հեղինակությունը: Ինը նշանավոր հայդուկների մահը նրան դժվար էր ներել: Այս կռիվը Գևորգի համար փաստորեն նշանակում էր հրաժարում հայդուկային գործելակերպից, առանց որի, սակայն, նա չէր կարող պատկերացնել իր կյանքը: Այն իր մէջ ամփոփում էր Գևորգի մոտալուտ կործանման նախանշանները: Կռվից հետո շատ չանցած, նա ամուսնանում է Հեղին գյուղացի Հեղինեի հետ, ինչը էլ ավելի է խորացնում նրա ողբերգությունը: Զգալով, որ հայդուկային պայքարն իրեն սպառել է, իսկ այլ գործելակերպի համար իր ընդունակությունները չեն ներում, Գևորգն ամուսնանում է: Սակայն դա ավելի է նպաստում նրա մեկուսացմանը, քանզի հայդուկային պայքարի օրենքներով ամուսնությունն արգելված էր: Ստեղծված կացությունից որևէ ելք չգտնելով, Գևորգը Վանի Դաշնակցության գործիչներին է ուղարկում վերոհիշյալ նամակը: Այդ նամակը քննարկվում է 1906 թ. հունիսի 25-ից հուլիսի 1-ը կայացած Վանի Հ. Հ. Դաշնակցության 3-րդ շրջանային ժողովում, որի հունիսի 25-ին կայացած 1-ին նիստի արձանագրության մեջ կարդում ենք. «Նկատի ունենալով, որ Սասունի դեպքերից հետո Դաշտի դրությունը վատացել է, որոշվեցավ ընկեր Ռուբենին ուղարկել այնտեղ, որ աշխատի խոհեմությամբ, Գևորգ Չաուշի և Տատրակիհետ խորհրդակցելով չարիքը հեռացնել, ժողովրդի վիճակը բարելավել և պարբերաբար տեղեկություններ տալ մեզ երկրի դրության, իր արածի և անելիքի մասին, որպեսզի տեղյակ լինենք այնտեղի իրականությանը և խորհենք ապագայի մասին: Ռուբենը իր հետ պիտի վերցնի առայժմ 50 լիրա: Որոշվեցավ նույնպես առաջին պատեհ վայրկյանին մարդ ուղարկել կազմակերպելու Սալնո Զորի (Ախլաթի–Ա. Ն.) շրջանը»[16]:

Ռուբեն Տեր Մինասյանը մուտք է գործում Տարոն 1906 թ. հուլիսին: Այդ ժամանակ նա ընդամենը 24 տարեկան էր,

16. Արամ-Ռուբեն, նշվ. աշխատությունը:, հ. Բ (2), էջ 416

բայց բավականին խոհեմ էր ու հեռատես։ Հենց իր գործունեության սկզբից Ռուբենը համոզվում է, որ Տարոնի ժողովրդի մեջ շատ խոր են նստած Հրայրի գաղափարները։ Մարմնավորելով ազատագրական պայքարի խնդիրներին Դաշնակցության նոր մոտեցումները և վկա լինելով Տարոնում առկա ուղղությունների օրհասական պայքարին, որն ընթանում էր հոգուտ այդ նոր մոտեցումների, Ռուբենն, անշուշտ, ձգտելու էր վերջնականապես բացառել հայդուկային շարժումները։ Սակայն, կարծում ենք, որ նա չէր կարող իր գործունեության հենց սկզբից ցույց տալ որևէ ուղղությանն իր վերջնական հակվածությունը, հետևյալ պատճառներով։ Եթե Գևորգը հնազանդվել էր Հրայրին, քանի որ վերջինս Տարոնում առաջին հեղինակությունն էր և ազատագրական պայքարի գլխավոր գաղափարախոսը, ապա նա չէր կամենա հպատակվել Ռուբենին, քանզի նրա համեմատ ինքը շատ հեղինակավոր էր։ Ռուբենը կձգտեր իրականացնել Հ. Հ. Դ. որոշումները Գևորգի հանդեպ, սակայն վերջինս, անշուշտ կդիմադրեր դրանց։ Այստեղից էլ՝ նրանց միջև բախումներն անխուսափելի չէին։ Ռուբենը շուտով Ղզլաղաճի, ապա ս. Կարապետի անտառում ժողովներ է գումարում, որոնց որոշումների իրականացումը նշանակում էր Տարոնում վերջ դնել հայդուկային պայքարին և նրա ավանդներին։

Մանավանդ ս. Կարապետի անտառում 1906 թ. հուլիս-օգոստոս ամիսներին գումարված Դուրան-Բարձրավանդակի Հ. Հ. Դ. շրջանային ժողովը, որի որոշումներին առանձին-առանձին հարկ չենք համարում անդրադառնալ, կոչված էր վերջնականապես որդեգրելու Գուրգենի և Հրայրի սկզբունքները՝ ս. Կարապետի ժողովի որոշումները կյանքի կոչելով։ Ռուբենն, ի վերջո, հանգեցնելու էր հետևյալ փոփոխություններին։

1. Վերջ էր տալու Դուրան-Բարձրավանդակի կենտրոնական կոմիտեի մեջ մտնող տեղական կազմակերպություններին ապակենտրոնացմանը՝ բոլոր այդ կազմակերպությունները գցելով իր անմիջական հսկողության տակ։ Բոլոր կրթական, դատական, հարկային և այլ խնդիրները նույնպես ինքն էր տնօրինելու։

Նկ. 3. Սոլոխցի Սերոբ (կենտրոնում)։ Աղբյուր Սերոբի զինակից-ներից է։ Մարտնչել է Սասունում, 1903-ին Կարսում միացել է «Շանթ» զինախմբին՝ Երգիր անցնելու համար։ Յուղվերանի մոտերքում Սերոբը զոհվում է անհավասար մարտում, նրա հետ զոհվում են նաև նրա Հակոբ և Ավետիս որդիները։

2. Ցրելու էր Սասունի հայդուկային հատուկենտ խմբերը և գաղտնի մարտական ուժեր էր ստեղծելու յուրաքանչյուր գյուղում։ Եթե մեկ-երկու հայդուկային խմբեր հնարավորություն չունին ապահովելու ամբողջ ժողովրդի ինքնապաշտպանությունը, ապա յուրաքանչյուր գյուղի մարտական խումբը հարկ եղած պարագային կկազմակերպեր տվյալ գյուղի ինքնապաշտպանությունը։

3. Կառավարության հրահրած հողազավթումների և իր բնօրրանից հայության դատարկման քաղաքականության դեմ պայքարելու էր ժողովրդական ուժերով: Սակայն, պետք է շեշտել, որ ժողովի որոշումներն իրականացնելը դյուրին խնդիր չէր, մանավանդ քանի դեռ Տարոնում էր գտնվում հայդուկային պայքարի վերջին մոհիկանը՝ Գևորգ Չաուշը, որը չէր կարող հեշտորեն հեռանալ այն կյանքից, որին նվիրվել էր գրեթե քսան տարի: Նա, անշուշտ, ներքին խոր ցավով էր ըմբռնում Դաշնակցության հրաժարվելը հայդուկային գործելակերպից, և քանի որ այլ ուղղությամբ գործելու համար էլ նրա կազմակերպչական ընդունակությունները չէին ներում, ուստի զգում էր, որ վաղ թե ուշ պետք է հեռանա: Սակայն, հայրենի Տարոնի նկատմամբ տածած սերն արգելում էր նրան հեռանալ:

Ս. Կարապետի շրջանային ժողովի որոշման համաձայն Գևորգ Չաուշը պետք է անցներ գործելու Խնուսում, իսկ Ռուբենը մնում էր Մշո դաշտում և Սասունում: Գևորգը 20-25 հոգուց բաղկացած խմբով Խնուս է հասնում ամենայն հավանականությամբ 1906 թ. օգոստոսի վերջերին: Նա այստեղ նպատակ է ունեցել զբաղվելու Մշո դաշտից Խնուս անցած գաղթականության տեղավորման, Կովկասից զենքերի տեղափոխությունն ապահովելու, ինչպես նաև տեղի որոշ քուրդ աշիրեթների հետ համերաշխություն ստեղծելու խնդրով: Բայց շատ հնարավոր է, որ Գևորգին Խնուս ուղարկելով, Ռուբենը ձգտել է նրան այնտեղից Կովկաս անցկացնելուն: Գևորգի՝ Խնուսում գտնվելու շրջանում, 1908 թ. Հ. Հ. Դաշնակցության Արևելյան Բյուրոն Դուրան-Բարձրավանդակ է ուղարկում երկու նոր գործիչների՝ Դերենիկին (Վարդան Իսկենդերյան) և Փիլոսին (Փիլոս Սարգսյան՝ Մարալ): Փաստերից կարելի է եզրակացնել, որ նրանք ուղարկված էին փոխարինելու Գևորգին: Այս գործիչները առաջին անգամ հանդիպում են նույն սեպտեմբեր ամսին Արոս գյուղում: «Մեկ-երկու օր հետո,– գրում է Դերենիկը,– որոշվեց Փիլոսին թողնել Խնուս որպես գործիչ, իսկ ես խմբի հետ միասին պիտի երթայի Մուշ»[17]:

17. «Հայրենիք» ամսագիրք, N 12 (216) հոկտեմբեր, 1940, էջ 108

Դերենիկը Գևորգի հետ մի գիշեր Ավրան գյուղում անցկացնելուց հետո անցնում է Սուլուխ, ուր Ռուբենի հետ հանդիպում էր նշանակված։ Հանդիպմանը ներկա են լինում նաև Մակարը և Գալեն։ «Հետագայում,– շատ չանցած գրում է Դերենիկը,– մեր խոսակցությունների ընթացքում ես և Ռուբենը պարզեցինք,– ես՝ Հ. Հ. Դաշնակցության Արևելյան բյուրոյի, իսկ նա՝ տեղական ընկերների տեսակետները։ Ռոստոմ, Սիմեոն և Համո (բժ. Օհանջանյան) շարունակ պնդել էին ու ինձ պատվիրել, որ աշխատենք Գևորգին համոզել, որ նա միաժամանակ թողնի երկիրն ու անցնի Կովկաս։ Առհասարակ տիրում էր այն կարծիքը, որ Դուրան-Բարձրավանդակում (Տարոն-Սասուն) ժողովուրդը հանգիստ պետք է ձգել, վերջին անցուդարձից քայքայվել էր հայ գյուղը։ Գևորգի և հայդուկների ներկայությունն էլ առիթ էր ստեղծում նորանոր դեպքերի։ Եթե հայդուկները ընդհարումներից աշխատեին խույս տալ, խուզարկությունները կը մնային որպես տևական, պարբերական չարիք։ Յուրաքանչյուր մի խուզարկու արշավանք միջին թվով երեք հարյուր հոգուց էր լինում բաղկացած։ Այդպիսի մի խումբ, երբ մանավանդ ներշնչված գալիս էր մարդ փնտրելու պատրվակի տակ կարեցածի չափ կողոպտելու հայ գյուղացին, այլևս հասկանալի կլիներ կացության ողբերգությունը։ Պետք էր համոզել միաժամանակ՝ անցնել Կովկաս։ Պետք էր, որ նա Կովկասում միաժամանակ շրջանների մեջ մտներ։ Ամենքը համոզված էին, որ այդ հանգամանքը բարերար ազդեցություն պետք է թողներ նրա բնավորության, գազազած հոգու և աշխարհայացքի վրա։ Մյուս կողմից նրա և փախստական տղոց մեկ մասի հեռանալով Դաշտի մեջ զինված ընդհարումները կը պակսեին»[18]։

Այս ընդարձակ մեջբերումից ինչպիսի՞ հետևությունների կարելի է հանգել։ Նախ՝ հայդուկային շարժումներն իրոք ջարդերի առիթներ էին ստեղծում և էլ ավելի էին նպաստում արևմտահայության քայքայմանը, և երկրորդ՝ Գևորգի հեռացումն էին պահանջում ոչ միայն Ռուբենը, այլև Հ. Հ. Դաշնակցության Արևելյան բյուրոն։ Բայց Գևորգը հա-

18. Նույն տեղը, N 1 (217), նոյեմբեր, 1940, էջ 147

մառորեն չեր ուզում հեռանալ: Նույն Դերենիկը վկայում է, որ Ռուբենը «շարունակ պայքարել էր խոսքով և օրինավոր որոշումներով, սակայն միշտ հանդիպել էր Գևորգի համառ դիմադրությանը: Պատահել էր նույնիսկ, որ համոզվել էր և մինչև իսկ Խնուս գնացել ու նորից հետ դարձել, պատճառաբանելով, թե «ճամբան բուք բորանի հանդիպեցան, չկարողացան անցնել»»[19]:

«Նա կարծես չէր ուզում տեսնել,– այնուհետև գրում է Դերենիկը,– որ իրանից հետո երկրում մնում էին նախ՝ Ռուբենը, որը բավական մեծ ժողովրդականություն էր ձեռք բերել համեմատաբար կարճ ժամանակամիջոցում, երկրորդ՝ Դերենիկը, որ թեև դեռ նոր էր եկած, բայց Ռուբենի ընկերակցությամբ կարող էր հետզհետե լավ օժանդակություն ցույց տալ»[20]:

Ռուբենն, անշուշտ, լավ ընդունելություն կգտներ, որովհետև Տարոնի ժողովրդի մեջ արմատացած էին Հրայրի գաղափարները: Իսկ Գևորգի հեռացման պահանջը բխում էր ինչպես ժողովրդի, այնպես էլ իր իսկ ապահովության շահերից, որովհետև կառավարությունը խոստորեն հետապնդում էր նրան:

1907 թ. գարնանը Խնուսից մասնավոր նամակով կանչվում է Փիլոսը: Նրա գալուց հետո Ռուբենը, Գևորգը, Դերենիկը, Փիլոսը, Գալեն, Մակարը և 9 ուրիշներ հավաքվում են ս. Կարապետի ս. Սարգիս փոքրիկ մատուռում: Քննարկվում են հայ-քրդական հարաբերությունների և Գևորգի հեռացման հարցերը: Գևորգի հեռացման խնդրի շուրջը Դերենիկի հուշերում կարդում ենք. «Ժողովը հույս ուներ, որ Գևորգը Կովկաս գնալով Դուրան-Բարձրավանդակի համար պիտի կարենար կլորիկ մի գումար ապահովել, ռազմամթերքի պարբերական փոխադրության զարկ տալ, մի բան, որ ամբողջապես կլանում էր Վանը»[21]:

Սակայն կարծում ենք, որ այստեղ կարևորը ոչ այնքան «կլորիկ գումարի» և «ռազմամթերքի պարբերական փոխա-

---

19. Նույն տեղը
20. Նույն տեղը
21. Նույն տեղը

դրության» հարցն էր, որքան դրանց պատրվակով Գևորգի հեռացումը: Հակառակ դեպքում այդ հարցերով կարող էր Խնուսից Կովկաս անցնել Փիլոսը, մանավանդ, որ նա ընտրել էր զենքերի տեղափոխման նոր ուղի (Կաղզվան-Մանազկերտ-Խնուս-Մուշ):

Հետաքրքիր է, որ Ռուբենն իր հուշերում գրում է, թե ինքն ու Գևորգը պետք է մեկնեին մասնակցելու Հ. Հ. Դ. 4-րդ ընդհանուր ժողովին, ինքը՝ Վան, իսկ Գևորգը՝ Խնուս-Կարս գծով: Նրանց փոխարինելու էին Փիլոսն ու Դերենիկը[22]:

Նախ՝ Ռուբենը վկայում է, որ ինքն ու Գևորգը ճանապարհ են ընկել ապրիլին, բայց չէ որ ժողովը Վիեննայում սկսվել էր փետրվարին և ապրիլին արդեն վերջանում էր: Երկրորդ, եթէ իրոք նրանք պետք է մեկնեին և իրենց փոխարինելու էին Դերենիկն ու Փիլոսը, այդ դեպքում ինչով բացատրել այն, որ ըստ Դերենիկի հուշերի, հեռացվում էին նաև ինքն ու Փիլոսը (այդ մասին քիչ հետո): Երրորդ. եթե Գևորգի հետ մեկնելու էր նաև Ռուբենը, այդ դեպքում նրանք ինչո՞ւ էին մեկնում տարբեր ուղղություններով և ոչ թե միասին (Ռուբենը գրում է, որ այդպես են որոշել, որպեսզի մեկի սպանվելու դեպքում գոնե մյուսը տեղ հասնի[23], բայց չենք կարծում, որ դա լուրջ պատճառ է): Գուցե պատճառը Վանում և Խնուսում կազմակերպչական որոշ խնդիրնե՞րն էին: Եթե՝ այո, այդ դեպքում ինչո՞ւ Ռուբենը Սուլուխի կռվից հետո (1907 թ. մայիսի 27) չի անցնում Վան: Այնպես որ, Ռուբենի՝ ժողովին մասնակցելու համար մեկնելու այս վարկածը տրամաբանական չէ, որովհետև ստացվում է, որ նրանք կամ տեղյակ չէին ժողովի ընթացքի մասին, որը քիչ է հավանական (կենտր. կոմիտեների թեկնածուները հրավիրում էին ընդհանուր ժողովից շատ առաջ), կամ էլ դա հորինել է Ռուբենը՝ Գևորգի հեռացման իր ձգտումները քողարկելու համար: Պատահական չէ, որ իր հուշերում Դերենիկը ոչինչ չի գրում Ռուբենի մեկնելու որոշման մասին,

---

22. Ռուբեն, նշվ. աշխատությունը, հ. Դ (4), Լոս-Անջելես, 1952, էջ 147
23. Տե՛ս նույն տեղը

Նկ. 4. Գալե։ Գևորգ Չաուշի հավատարիմ զինվորն է եղել

այլ, ընդհակառակն, վկայում է, որ Դուրան Բարձրավանդակից հեռացվում էին նաև ինքը և Փիլոսը։ Այնտեղ կարդում ենք հետևյալը. «Տրված որոշումների գործադրության համար (ս. Սարգսի մատուռի ժողովի–Ա. Ն.) պետք է, որ Փիլոսը և ես գնայինք Խնուս, ցերեկով ս. Կարապետի կարավանի հետ, որպես ջորեպաններ ջորեպանի տարազով։ Այնտեղ Գևորգի ճամփորդության համար պետք է պատրաստեինք ամեն ինչ, որպեսզի Գևորգը, առանց ժամանակ կորցնելու անցներ Գոբալներ կոչվող գծով։ Գևորգի անցնելուց հետո Փիլոսը պետք է անցներ Մանազկերտ՝ հասնանցի Կուլի բեկի հետ սկսած խնդիրը կարգադրելու և Կաղզվանի վրայով գիծ ստեղծելու։ Ես Փիլոսի հեռանալուց հետո պիտի անցնեի Կարին՝ տեղական մարմնի տրամադրության տակ աշխատելու։ Սկզբունքով ընդունվեցավ՝

երկիրը միաժամանակ խաղաղ գործունեության մեջ պահել։ Հետևապես շրջող հայդուկների թիվը պետք է պակասեցվեր՝ Կովկաս ղրկելով։ Ուրեմն խնդիրը ճիշտ այդ ձևի տակ մտցնելու մտքով պետք էր սկսել մեզնից։ Առաջ և առաջ Կովկասից դեռևս նոր եկած ընկերները պետք է հեռանային։ Նրանցից հետո էլ՝ Աստված ողորմած էր, մի դեպք պատահեր, և Գևորգի Կովկաս անցնելու խնդիրը մոռացվեր։ Խնդրի մեջ ամենից կանխիկը իմ ու Փիլոսը հեռացվելն էր, իսկ Գևորգի հեռանալը մնում էր դեռ «ապառիքների գրքի մեջ»։ Ռուբենը, հակառակ իր նրբանկատության, այս անգամ էլ տարվել էր»[24]։

Այսուհետև, Դերենիկը հետևյալն էր գրում, որը հարկ ենք համարում մեջ բերել՝ անհրաժեշտ եզրակացություններ կատարելու համար. «Այդ գիշեր, սակայն, Գևորգը արտասովոր քայլեր էր անում։ Ավրանա Մուսոյին, որ լավ երգիչ էր, ազատ, համարձակ երգել էր տալիս։ Ես ջղայնացած դիմեցի Ռուբենին, նա՝ Գևորգին։ Սակայն, մի չոր պատասխան միայն եկավ ամեն ինչին վերջ դնելու։

–Ես ռուսաստանցի մուկ չեմ, որ վախենամ։

Նա ուզում էր մի դեպք ստեղծել։ Մեր ընկերական շրջանի մեջ կը լիներ, թե թշնամու հետ, տարբերություն չուներ, միայն թե որոշյալ նպատակը իրագործվեր՝ «Կովկաս անցնելու որոշումը ցնդեր հոդս»։ Առայժմ փաստն այն էր, որ ես ու Փիլոսը քաղաքավարի կերպով հեռացվում էինք Դուրան-Բարձրավանդակից»[25]։

Այս բոլորից հարկ է հետևյալ եզրակացություններն անել։

Առաջին՝ ճիշտ պնդելով Գևորգ Չաուշի հեռացման անհրաժեշտության վրա, որը նաև Հ. Հ. Դ. Արևելյան բյուրոյի պահանջն էր, Ռուբենը դրանով ձգտում էր Տարոնում հաստատել իր միանձնյա ղեկավարությունը։ Եթե իրոք Գևորգի հեռացումը պահանջում էր ժողովրդի շահը, այդ դեպքում ինչո՞վ բացատրել Դերենիկի հեռացումը, որը ընդունում էր Ռուբենի գործելակերպը։ Երկրորդ. Գևորգ Չաուշը

---

24. «Հայրենիք» ամսագիրք, N 1 (217) նոյեմբեր, 1940, էջ 159
25. Նույն տեղը

ըմբռնելով, որ Ռուբենն ամեն կերպ, այս կամ այն պատրվակով ձգտում է իր հեռացմանը, առիթներ էր որոնում նրա այդ պահանջը չկատարելու համար: Ըստ երևոյթին նա հասկացել է Ռուբենի՝ միանձնյա իշխելու հակումները:

Վերոհիշյալ ժողովից հետո Դերենիկը և Փիլոսը անցնում են Ավրան գյուղը, որտեղից էլ՝ որպես ջորեպան՝ Խնուս, ուր պատրաստվում են ընդունելու Գևորգին: Սակայն, Գևորգն այդպես էլ չի գնում: Շատ չանցած լսում են, որ նա զոհվել է: Իսկ ինչպիսի՞ իրադարձություններ են լինում մինչև մայիսի 27-ը: Նախ, դիմենք Ռուբենի հուշերին: Ըստ այդ հուշերի 1907 թ. ապրիլին Ռուբենը և Գևորգը 80 հոգով իջնում են Մշո դաշտ՝ շուտով Կովկաս անցնելու համար: Երբ հասնում են Քարձոր գյուղը, որտեղից սկսվում է դաշտը, գիշերը տեղի Ֆայաթ բեկից 40 ձի են վերցնում և արշալույսին հասնում ս. Հովհաննու անտառները: Մշո Տատրակից (Գեղամ Տեր-Կարապետյան) լուր ստանալով, որ իրենց վրա զորք է գալիս՝ Ղզլաղաճ գետի հոսանքով իջնում են մինչև Քյուրդ մեյդան հայկական գյուղը: Թշնամին կարծելով, թե նրանք ս. Հովհանու անտառներում են՝ կրակ է բացում: Այնուհետև, Ռուբենը Գևորգի խորհրդով 25 ձիավորով իջնում է բաց դաշտ՝ թուրք ձիավորներին թյուրիմացության մեջ գցելու համար, որից հետո արշավում է դեպի Զանգոք (Տավրոսի փեշին, Արածանիից բավականին հեռու, որը Քյուրդ մեյդանի և Շեյխլանի հետ կազմում է եռանկյունի) և կրակ բացում Շեյխլանից Քյուրդ մեյդան առաջացող զորքի վրա: Թշնամին փոխում է ճանապարհը և արշավում Ռուբենի խմբի հետևից: Երբ Ռուբենի խումբը բավականին հեռանում է և մոտենում Տավրոսի փեշերին, Գևորգն անցնում է նրան հետապնդող թշնամու թիկունքը՝ բաժանելով հեծելազորը հետևակից: Այնուհետև, թշնամուն առնում են երկու կրակի մեջ, որը զոհեր տալով, դիմում է փախուստի: Թուրքերի հետևակն ուղղվում է դեպի Զանգոք, իսկ հայդուկները՝ Շեյխլան և ապա՝ անցնելով Արածանին, նրա ափով իջնում են մինչև Սուլուխի կամուրջը, որի երկու պահակներին վերացնելով՝ շարժվում են Հունան: Այստեղ բաժանվում են երկու մասի: Ռուբենը 20 հոգով անցնում է Մեղրագետը և բարձրանում Տեր-

դևանք լեռը, իսկ Գևորգը շարժվում է դեպի քրդագոմ[26]:

Գևորգը, որը նպատակ է ունենում շրջելու Դուրան-Բարձրավանդակի կենտ. կոմիտեի Սոխակյան և Օազիսի շրջաններում, շարունակում է հետապնդվել: Սակայն, իրեն հատուկ հմտությամբ կարողանում է թշնամուն դարձյալ թյուրիմացության մեջ գցել և, ի վերջո, պատսպարվել Մառնիկի անտառում, որտեղից լուր է ուղարկում Ռուբենին, որպեսզի իջնի Դերեկ (Աշտիշատ), որը վերջին ժամադրավայրն էր: Այնուհետև, Գևորգը մի քանի ընկերներով իջնում է Սուլուխ, Դերեկ անցնելու, իսկ Ռուբենը ֆրանկ Սահակի առաջնորդությամբ Ցրոնք, որտեղից պետք է անցներ Սուլուխ և ապա՝ Դերեկ[27]:

Այնուհետև, Ռուբենը հետևյալն է գրում. «Ես ալ կըշտապեմ մայիսի 8-ին հասնել Դերեկ: Այնտեղ կը տեսնվինք, վերջին անգամ կը խոսինք և իր մոտ եկած Վանի սուրհանդակ Ղարսա Հակոյին և քյուրդ Հասանոյին առնելով պիտի վերադառնամ Վան:

Այդ օրը Ցրոնք են եկած ալվարինջցի հայտնի ֆետայի Սեյտո Պողոսը, մշեցի Ռուբենը, ցրոնքցի լավ կռվողներ Էլոն, Խուչոն և Մխիկը: Կը վերցնեմ այդ հինգ կտրիճները և հետիոտն ճամփա կիյնանք դեպի Սուլուխ: Արշալոյսին կը հասնինք Սուլուխ: Մեծ զարմանքով կը տեսնեմ, որ Գևորգ չէ մեկնած այդ գյուղեն դեպի Դերեկ»[28]:

Դժվար է ասել, թե Գևորգը ինչո՞ւ է նախատեսվածից շատ մնացել Սուլուխում: Ռուբենը գրում է, որ նա իր այդ հարցին պատասխանում է. «Դու բան չես գիտե, Խնուսի սուրհանդակները վաղը պիտի հասնին Դերեկ (վերջիններս պետք է գային Գևորգին Խնուս առաջնորդելու–Ա. Ն.), երբ նախապես մենք հոն լինինք, պիտի վտանգվին թե անոնք և թե մենք. հանգիստ դու քնե, հեչ բանըմ էլ չկա»[29]:

Բայց մենք կարծում ենք, որ Գևորգի Դերեկ չանցնելու պատճառը միայն դա չէր: Եթե իրոք զգուշանում էր Դերեկի

---

26. Տե՛ս Ռուբեն, նշվ. աշխատությունը, հ. Դ (4), էջ 147-154
27. Նույն տեղը, էջ 156-157
28. Նույն տեղը, էջ 157
29. Նույն տեղը

Նկ. 5. Սմբատ

վրա հարձակումից, ապա այդ հարձակումը չէր բացառվում նաև Սուլուխի վրա նրա Սուլուխում գտնվելու ընթացքում: Չէ որ թշնամին ամենուրեք նրան հետամուտ էր լինում: Մենք համոզված ենք, որ Գևորգը մնալով Սուլուխում՝ դարձյալ նպատակ է ունեցել ձգձգելու իր Կովկաս ացնելու խնդիրը: Հակառակ դեպքում նա կանցներ Դերեկ, որտեղից, ընդհարման դեպքում, շատ ավելի դյուրին էր հեռանալ, քան Սուլուխից, որը գտնվելով Էրզրումից Մուշ տանող միակ ճանապարհի վրա, անընդհատ հսկողության տակ էր:

Գևորգ Չաուշի այս սխալը նրա համար ճակատագրական է լինում: Մայիսի 27-ի առավոտյան գյուղի վրա զորք է գալիս: Խարսա Հակոյին, սուլուխցի Սաղոյին, քուրդ Հասանոյին և մի քանի գյուղացիների անմիջապես ուղարկում են գյուղից 150 մետր հեռավորության վրա գտնվող կամուրջը գրավելու և արգելելու Կուրավուի պահակազորի անցումը դեպի Սուլուխ: Գևորգը սկզբում ձգտում է կռվից խույս տալ և նահանջել, բայց ձիերը չեն բավականացնում: Բացի այդ, «Կամուրջի աջ գլխին վրա կերևան արդեն եկած զորքերը, որոնք չեն փորձեր անցնիլ կամուրջը, որուն ձախ գլուխը բռնած են Սաղոն ու Հակոն իրենց փոքրաթիվ ընկերներով»[30]:

Այս պայմաններում Գևորգը բաժանում է դիրքերը, որոնք «իրարու հետ կը կազմեն եռանկյուն մը. գլուխը գյուղեն դուրս ինկած խարապա (ավերակ) մըն էր, որը դաշտի մեջ ըլլալով, գյուղի ծայրին, միայն 50 քայլ հեռու էր խճուղիեն, մյուս դիրքը ձախ ինկած մոտ 70 քայլ հեռավորությամբ Քյուչյուքի տան տանիքն էր, որը կիշխեր դաշտի կողմեն եկողներու վրա, իսկ երրորդը առաջին խարապայի դիրքեն դեպի աջ ինկող կիսաշեն եկեղեցիին պատերն էին, որ կիշխեր խճուղիի վրա և կապահովեր կամուրջի մեր դիրքին թիկունքը»[31]:

Գևորգը Գալեի, Տիգրանի, Ալիջանի Տիգրանի, սուլուխցի Մոսիկի, Մեսրոպի և Քյուչյուկի հրամանատարության տակ գտնվող մի տասնյակ կռվողների հետ վերցնում է տանիքի դիրքը, Ռուբենը՝ Սեյդոյի, ալիզռնանցի Մուքոյի, ցրոնքցի Էլոյի և Մխիկի հետ գյուղից դուրս ընկած «խարապան»: Նրա հետ էր նաև սուլուխցի Սամոն՝ 6–7 ընկերներով: Եկեղեցու դիրքը բռնում է շենիկցի Ղազարը՝ մշեցի Ռուբենի, Գփրոյի և մի տասնյակ տեղացի կռվողների հետ[32]:

Այս բոլորից բացի գյուղում մնում էր մի փոքրիկ խումբ, որը պետք է տեղաշարժվեր Գևորգի ցուցմունքներով:

Հայ կռվողների ընդհանուր թիվը կազմում էր 80 հոգի,

---

30. «Հայրենիք» ամսագիրք, N 1 (217) նոյեմբեր, 1940, էջ 159
31. Նույն տեղը
32. Նույն տեղը, էջ 163

որոնք ունեին տարբեր զենքեր: Սուլուխի պահեստում կար ընդամենը 8000 փամփուշտ[33]:

Կռվի ազդանշանը տալիս է Գևորգը, որին հետևում են մյուսները: Թշնամին կես ժամվա կռվից հետո 1000 քայլ հետ է նահանջում՝ տալով 90–100 զոհ[34]:

Ժամը 11-ին նրա խումբը բաժանվելով երեք մասի՝ վերսկըսում է գրոհը: Հայդուկները դիմադրում են, բայց քանի որ թշնամին բազմաքանակ էր՝ աստիճանաբար մոտենում է Ռուբենի դիրքին, իսկ մյուս կողմից լցվում է գերեզմանոցը, որը Գևորգի դիրքից 100 քայլ հեռավորության վրա էր: Թուրքերն արդեն գերեզմանոցի կողմից լցվում են գյուղը: Ռուբենը հնարավորություն չի ունենում այդ ուղղությամբ գրոհի առաջն առնելու, քանի որ իր դիրքից ընդամենը 50 քայլ հեռու էր գտնվում զորքը:

«Ահա փոսերեն դուրս կը ցատկեն,– գրում է նա,– ու կը վազեն դեպի մեզ: Հրացանները մեկ կողմ դրած ենք, ու կը գործեն տասնոցները. հարձակվողները նորեն ետ կընկըրկին: Մեկ մասը սակայն մեր աջ թև կը մտնե ու գյուղի մարագներն ու տանիքները դիրք կը բռնե, ասոնք կիյնան մեր և եկեղեցվո դիրքին միջև, ուրկե Շենըկի Ղազար նեղ կ ը լծե զանոնք ու մեր թիկունքը կապահովե[35]»:

Բայց շատ չանցած թշնամին անցնում է Ռուբենի թիկունքը: «Կը կանչենք Գևորգը օգնության,– շարունակում է նա,– պատասխանի փոխարեն կը լսենք՝ «թեսլիմ-թեսլիմ»: Գերեզմանոցեն արշավողները բռնած են Գևորգի դիրքը: Կորսված ենք կարծես, շրջապատված խարապայի մեջ, բայց հույս ունինք, թե Գևորգ դիրքը փոխած է ու շուտով կգա մեր թիկունքը մաքրելու: Այս հույսով շրջանակ կազմինք ու կատաղաբար կը կռվինք»[36]:

Ռուբենին մնում էր միայն մի ելք՝ հետ վերցնել Գևորգի դիրքը: Հակառակ դեպքում բոլորը կորած էին: Ուստի, նա Էլոյին ուղարկում է, որպեսզի Գևորգի կենդանի լինելու դեպքում նրան ասի, որ հարձակվի և մաքրի թիկունքը, իսկ

33. Նույն տեղը
34. Նույն տեղը
35. Նույն տեղը, էջ 164
36. Նույն տեղը, էջ 165

եթե ոչ՝ ինքը հարձակվի։ Բարեբախտաբար Էլոյին՝ Գրքոյի և Տիգրանի հետ հաջողվում է գրավել Գևորգի դիրքը։ Իսկ ինչ էր կատարվում Գևորգի հետ։ Թշնամու երկրորդ գրոհի ժամանակ աչքից զարնվում է Գալեն։ Գևորգը պատվիրել-ով, որ նրան տանիքից տուն իջեցնեն՝ շարունակում է կռվել։ Բայց արագ-արագ կրակելու հետևանքով նրա հրացանի սուրման ամրանում է։ Երբ փորձում է կարգի բերել՝ «...կը վիրավորվի ձախ ծնկի տակեն, գնդակը անցնելով աջ թիկունքի տակը։ Գևորգը կըսե մնացողներուն. «Ես կիջնեմ Գալեի մոտ, դուք դիրքը ամուր պահեցեք»։ Փորսող տալով կիջնե վար տանիքեն. կը մտնե տուն և կիսամեռ Գալեի կողքին կը նստի։ Բայց շուտով հուսախաբ կըլլա. կես ժամեն տանիքը կը գրավեն զորքերը, մեր կռվողները կը նահանջեն փողոց և դիմացի տանիքները կը բռնեն»[37]։

Երբ թուրքերը գրավում են տանիքը, Գևորգը քաշվում է գոմի մութ անկյունը, ուր ջրհորն էր, նպատակ ունենալով զորքի ներս մտնելու դեպքում նետվելու ջրհորը։ Այս ընթացքում Էլոն վերագրավում է դիրքը։

Կռվի երրրոդ փուլն սկսվում է կեսօրին։ Թշնամին կրկին հարձակման է անցնում, վիրավորվում են Սեյդոն, Մխիկը, Ռուբենը։ Կռվի օրը Դերեկում գտնվող Ավրանա Արամը և Քեռի Ղազարը հրացանաձգության ձայներ լսելով և մտածելով, որ Սուլուխում կռիվ է, մի քանի ընկերներով իջնում են Ավրան, վերցնում են այնտեղի մարտական խումբը և մոտենում Սուլուխի կամրջին, ուր կռվի են բռնվում։ «Թեև չեն հաջողում զորքը հեռացնել,– գրում է Ռուբենը,– բայց անշարժության կը մատնեն։ Այդ է եղել պատճառը, որ մեր փոքրաթիվ խումբն այնքան հերոսությամբ և համառությամբ կրցավ դիմանալ կամուրջի ձախ գլխին, թեև աննման Հակոն զարնված էր ճակտեն»[38]։

Իսկ գյուղում կռիվը շարունակվում է մինչև երեկո։ Մութն ընկնելուց առաջ թշնամին թնդանոթ է բերում։ Գյուղը գրեթե գրավվում է։ Հայդուկների ձեռքին է մնում միայն գետի ափի փողոցը։ Սուլուխցիները Ալիջանի Տիգրանի և մշեցի Ռու-

---

37. Նույն տեղը, էջ 166
38. Նույն տեղը, էջ 168

բենի գլխավորությամբ ծուռ ու մուռ փողոցներով անցնում են թիկունքը, կրակում և երկու փողոց ազատում: Դրանից հետո որոշում են գյուղից դուրս գալ, Ռուբենը կարգադրում է անպայման կենդանի կամ մեռած վերցնել Գևորգին և Գալեին: Բոլորը միասին, Շենիկի Ղազարի գլխավորությամբ, տանիքներից, փողոցներից հարձակվում են զորքի վրա և նրան շփոթության մատնելով՝ գրավում են մի քանի փողոց և Քյուչուկի տունը, որտեղից Գևորգին և Գալեին շալկելով՝ տեղափոխում են գետափի փողոցը: Թշնամին ենթադրելով, որ հայդուկները կփախչեն գերեզմանոցի կողմից՝ զորքեր է կենտրոնացնում նրա շուրջը: Ռուբենը որոշում է օգտվել նրա այդ սխալից: Նա կարգադրում է Ալիջանի Տիգրանին, որ նա 5 հոգով մնա Քյուչուկի տան տանիքին և մի ժամի չափ շարունակի կռվել մինչև իրենք հեռանան: Գալեին, որն արդեն մեռած էր, նետում են գետը, իսկ Գևորգին կապում են ձիու վրա: Առաջապահ է դառնում Շենիկի Ղազարը՝ 10 հոգով, նրան 20 հոգով հետևում է Ռուբենը, վերջինիս՝ Սեյդոն՝ մշեցի Ռուբենի և Տիգրանի ընկերակցությամբ: Հետնապահ դառնում են Միսիկը, Էլոն և Մոսիկը՝ մոտ 40 հոգով: Անաղմուկ անցնում են զորքի միջով, որը կարծելով, թե զինվորներ են՝ չի կրակում: Ընդհարում է ունենում միայն վերջապահ մասը: Մնացյալները կտրելով խճուղին՝ ուղղվում են դեպի գետի ափը և, թշնամու երկրորդ շղթան էլ լուռ անցնելով՝ նստում են, մինչև տեղ է հասնում հետնապահ խումբը: Ապա կրկին շարունակում են ճանապարհը և հասնում մինչև Ղաշղալթաղ գյուղի եղեգնուտները, ուր Ռուբենը, հրամայում է ցրվել՝ ով ուր կամենա, իսկ ինքը Գևորգի հետ, 22 հոգով մնում է այնտեղ[39]:

«Կը մտածենք մեր ընելիքի մասին,– գրում է այնուհետև Ռուբենը,– բայց թե կրակեն ազատած՝ ծովն ենք ընկած: Մեղրագետը կը միանա Եփրատին Ղաշղալթաղի մոտերքը կազմելով եռանկյուն մը. մեկ կողմը Սուլուխն է, ուր զորքն է, մյուս կողմերը այդ երկու հորդած գետերն են: Մենք ընկած ենք այդ եռանկյան մեջ: Գետը կարելի է անցնիլ միայն լավ լողալ գիտենալով, իսկ մեզմե 5–6 հոգի միայն

39. Տես նույն տեղը, էջ 138-172

լողալ գիտեն. հապա Գևորգը, որ դեռ կը շնչե։ Կորոշենք Գևորգը թողուլ եղեգնուտներու մեջ՝ պահապան դնելով Սուլուխի Սաղոն, Զրոռն և Մեսրպը, իսկ մենք պիտի մտնենք Ղաշղալթաղ գյուղ, քալակներ և տիկեր պիտի գտնենք և վերադառնալով, ամենքս միասին պիտի անցնեինք Մուրադի աջ ափը։

Կը հասնինք Ղաշղալթաղ, կը գտնենք միայն վեց տիկ՝ մեկ քալակ կազմելու չափ, այդ հազիվ բավեր, միայն Գևորգն ու ընկերները անցնելու։ Ուստի, հուսահատ՝ մեր ծրագիրը կը փոխենք։ Կը պատվիրենք Ղաշղալթաղի Գևորգին երթալ Գևորգ Զաուշին մոտ, վերցնել զայն ու պահապանները և քալակով գետը անցնիլ»[40]։

Իսկ իրենք բաժանվում են երկու խմբի։ Մի մասը Սեյդոյի հետ վերադառնում է դեպի թշնամու գիծը և կտրելով խճուղին՝ ուղևորվում Բերդակ, իսկ մյուս մասը (10 հոգի) Ռուբենի գլխավորությամբ անցնում է գետի մյուս ափը, որտեղից էլ Ղզլաղաճի անտառը և ապա՝ Մնձնուտ գյուղը, որի գերեզմանոցում թաքնվելուց հետո բարձրանում են դեպի ս. Հովհաննու կողմերը[41]։

Սուլուխից կարողանում է հաջողությամբ դուրս գալ նաև Ալիջանի Տիգրանը։ Նա չորս հոգով մինչև գիշեր կռվելով, այնուհետև, մտնում է զորքի մեջ և հրամայում տասնոցներով կրակել։ Ջինվորները մթան մեջ չկողմնորոշվելով՝ կրակում են իրար վրա։ Տիգրանն օգտվելով դրանից, ընկերների հետ մտնում է մի տուն, ապա խառնվում է զորքին և դուրս գալիս դաշտ՝ տալով մեկ զոհ[42]։

Ըստ Ռուբենի, Գևորգ Զաուշի մահը հետևյալ կերպ է լինում։ Նրա պահապաններից Մեսրոպը տեսնելով, որ տկեր բերողներն ուշանում են, շտապում է գյուղ, որպեսզի ինքը բերի։ Սաղոն ու Զրոռն տեսնելով, որ զորքը շարժվում է դեպի Ղաշղալթաղ, «թաքստոցը կը փոխեն և կը մտնեն ավելի խոր եղեգներու մեջ։ Մեսրոպ կը վերադառնա, բայց չի գտներ տղաքը և հուսահատ Ղաշղալթաղ կերթա։ Արևը կը

---

40. Նույն տեղը, էջ 172-173։
41. Նույն տեղը, էջ 172-173
42. Նույն տեղը

ծագի, Գևորգ հոգին կավանդե։ Կեսօրեն հետո կը ձերբակալեն կին մը, որ նույնպես պահված է եղեր եղեգնուտներու մեջ, անկե կիմանան Գևորգի մահվան մասին, կը խուզարկեն եղեգնուտը և կը գտնեն Սաղոն, Զրոը և Գևորգի դիակը։ Գևորգ հենված է եղեր խուրձ մը եղեգնի վրա, մեկ բոի մեջ պինդ բռնած հոգեվարքի ատեն պոկած եղեգները, երևի տանջանքով մեռեր է»[43]։

Սուլուխի կռվի մասնակից 17 հայդուկներից զոհվում են երեքը (Գևորգը, Գալեն և Հակոն), կռվող գյուղացիներից՝ 18 հոգի, անզեն ժողովրդից՝ 23 հոգի։ Վիրավորվում է 11 հայդուկ։ Կռվից հետո գյուղը թալանվում է։ Թշնամուց սպանվում են զորքի հրամանատար Բինբաշին, 2 հարյուրապետ, 5 մյուլազիմ, 12 զինվոր[44]։

Բինբաշու մահվան մասին Ռուբենը հետևյալն է գրում. «Ան սպանված էր կեսօրեն վերջ, այն ատեն, երբ թշնամին մեզ նեղն էր դրած ու կարող էր Եփրատի մեջ թափել։ Երբ Բինբաշին կը մեռնի, զորքը կը շփոթվի ու կռվի եռանդը կը թուլանա անոր մեջ։ Ոմանք ըսին, թե Քեոսեն մեռեր է Գևորգի գնդակով։ Բայց այդ սխալ է, քանի որ Գևորգ շարքերեն ելած էր անոր մեռնելեն առաջ։ Ոմանք ըսին, թե Մուքոն ու Սեյտոն են զարկած, այդ ալ սխալ է, քանի որ անոնք իմ մոտ էին և ոչ ոք մեզմե գիտեր, թե մեր դեմ կռվողը Քեոսեն է։ Շատերն ալ ըսին, թե իմ գնդակե ինկած է. այս ալ սխալ է, բոլոր կռվողներս 3 օր ետք միայն իմացանք, որ մեր դեմ եկողը Քեոսեն է։ Թերևս ճշմարտության մոտ ըլլա ըսել, թե ան սպանված էր մեր գնդակներեն՝ ընդհանուր կարգով արձակված»[45]։

Ահա համառոտ այն ամենը, ինչ գրում է Ռուբենը Սուլուխի կռվի և նրա հետևանքների մասին։ Ի՞նչ եզրակացություններ կարելի է հանգել այս բոլորից։ Նախ՝ հնարավո՞ր էր, արդյոք, խուսափել Սուլուխի կռվից։ Կարծում ենք, որ հնարավոր էր, եթե Գևորգը ժամանակին մեկնած լիներ Դերեկ։ Քանի դեռ Գևորգը չէր հեռացել Տարոնից, նրա այսպի-

43. Նույն տեղը, էջ 175-176
44. Տե՛ս նույն տեղը, էջ 176-177
45. Նույն տեղը, էջ 177

սի ճակատագիրն անխուսափելի էր, մանավանդ Խարսի կրոնից հետո ընկած ժամանակաշրջանում։ Ինչպես Սերոբը՝ Բաբշենի, այնպես էլ Գևորգը Խարսի կռվից հետո այլևս դատապարտյալ էր։ Ալվառինջի կռվում նա մազապուրծ եղավ, իսկ Ռուբենի՝ Տարոն մուտքից հետո նրա այնտեղից չհեռանալու ճիգերը, անշուշտ, վաղ թե ուշ հանգեցնելու էին Սոլոխի կռվին։

Երկրորդ. Սոլոխի կվում կարո՞ղ էր ավելին անել Ռուբենը, որ չարեց։ Մեր խորին համոզմամբ՝ ոչ։ Ճիշտ է, հնարավոր չէ, որ Ռուբենը ներքուստ չդժգոհեր Գևորգից, քանի որ, ի վերջո, նրա պատճառով էր եղել այն։ Բայց անառարկելի է, որ ստեղծված բարդ իրավիճակում, երբ կարծես բոլորի կործանումն անխուսափելի է, միայն Ռուբենի ճիշտ կողմնորոշման արդյունք պետք է համարել թե՛ գյուղից բավականին հաջող նահանջը և թե՛ մնացյալ հայդուկների ու գյուղացիների փրկությունը։ Նրա խուճապի մատնվելու դեպքում ոչ միայն կզոհվեին հայդուկները, այլև նախճիրի կմատնվեր ողջ գյուղը։

Երրորդ. Սոլոխի կռվի և ապա նահանջի՝ Ռուբենի վերոհիշյալ նկարագրության մեջ կա՞ որևէ տեղ, ուր կարելի է մեղադրել նրան։ Եթե այո, ապա կապված միայն Գևորգին եղեգնուտներում թողնելու հարցի հետ։ Ինչպես արդեն նշել ենք, Ռուբենն ու ընկերները Գևորգին երկու պահապանների հետ թողնելով եղեգնուտների մեջ՝ անցնում են Ղաշղալթաղ՝ տկերը բերելու և նրանից հետո գետն անցնելու համար։ Սակայն, համապատասխան քանակությամբ տկեր չգտնելով, իրենք անցնում են գետը՝ պատվիրելով ղաշղալթաղցի Գևորգին, որպեսզի գնա և նրան տեղափոխի։ Նախ՝ Ռուբենն ու ընկերները պետք է նախքան Գևորգին լքելը գիտակցեին, որ կարող է Ղաշղալթաղում պահանջված քանակությամբ տկեր չգտնվեն և այստեղ էլ՝ նրանք անպայման պետք է Գևորգին մինչև Ղաշղալթաղ տանեին իրենց հետ, որպեսզի տկեր գտնելու դեպքում այլևս չդառնային եղեգնուտը և միանգամից անցնեին գետը։ Երկրորդ, Ռուբենը վկայում է, որ իրենցից (10 հոգուց) 5–6 հոգի լողալ են իմացել։ Մի՞թե այդ 5–6 հոգի լողորդից երկուսը չէին կարող Գևորգին ընդամենը մեկ-երկու տկի վրա կապելով տեղափոխել հաջորդ

ափը: Սակայն այս բոլորով հանդերձ, մենք Ռուբենի արարքի մեջ որևէ դիտավորություն չենք տեսնում: Քանի որ, եթե Ռուբենը ցանկանար լքել Գևորգին՝ ուզենալով նրա մահը, նա այդպես կարող էր վարվել Սուլուխում, և ոչ ոք նրան չէր կարող մեղադրել: Բայց նահանջից առաջ նա հրամայեց ինչ գնով էլ լինի հասնել Գևորգի դիրքը և վերցնել նրան ու Գալեին՝ ողջ կամ մեռած: Եթե նա այդ հրահանգը չտար և նահանջեր առանց Գևորգին վերցնելու, ապա դրա բոլոր հիմքերը ուներ: Չէ որ հնարավոր էր, որ Գևորգին հասնելու փորձը ձախող վերջանար: Նաև չպետք է մոռանալ, որ Սուլուխից նահանջելու ճանապարհին ցավերին այլևս դիմանալու անկարող Գևորգը անընդհատ խնդրել է իրեն ձգել և հեռանալ: Ճշմարիտ է նաև այն, որ Ռուբենի խումբը գետը նետվելով համոզված չի եղել մյուս ափը հասնելու հաջողության մեջ: Բայց, անկախ ամեն բանից, թե գետանցման փորձը ինչպես կվերջանար, ինչ է նրանից խնդրել Գևորգը, կարծում ենք, որ նրանք պարտավոր էին փոխադրել Գևորգին: Այդ դեպքում, համենայն դեպս, Ռուբենին թերևս չվերագրվեին մի քանի անհիմն վարկածներ: Դրանցից մեկի հեղինակը, ըստ որի Սուլուխի կռվում Գևորգին թիկունքից խփել է Ռուբենը, զորավար Սմբատն է (Սմբատ Բորոյան, Մախլուտո): Ըստ նրա, մի օր Քեռսե Բինբաշին լուր է ուղարկում Գևորգին և նրա հետ հանդիպում է նշանակում Մշո Արաղ գյուղում, ուր «իբրև լավագույն բարեկամության արտահայտություն և իբրև գաղափարի կապ՝ կը թելադրե իր վրա չհարձակիլ օր մը, երբ կառավարության հրամանով զիրար ճակատեն: Արդ, այդ բոպեին ճանաչվելու համար ճերմակ պաստառ մը պիտի պարզեմ, կըսե»[46]: Այնուհետև, գրում է, որ Ռուբենը Փեթար գյուղի զինվորներին հավաքում է ռես Պետոյի տունը: Գևորգը կասկածելով, որ իր դեմ դավ է նյութվում, «կորոշե երթալ և անպայման հասկանալ անոր այցելության շարժառիթը և պահանջել հարկին բռնի ուժով»[47]:

Նա իրեն դիմավորած և հանգստացնել փորձող ռես Պե-

---

46. Մկրտիչ Երիցյանց, Զորավար Սմբատի հուշերը, հ. Ա, 1890-1914, Փարիզ, 1936, էջ 165
47. Նույն տեղը, էջ 316-317

տոյին պատասխանում է. «Հանգստանալու պետք չունեմ, կուզեմ իր հաշիվը մաքրեմ»: Բայց տեղի տալով նրա խընդրանքին՝ անցնում է հարևանի տունը: Իսկ հաջորդ օրը, երբ հանդիպում է Ռուբենին, հետևյալն է ասում. «Ես Իշխանի նման չեմ ըներ (նկատի ունի Վանի իշխանին) Նիկոլ Պողոսյան (որի հետ միառժամանակ Ռուբենը գործել էր Լեռնապարում–Ա. Ն.), կը զարնեմ, կը սատկացնեմ»: Ռուբեն ռեսի և տղոց առջև մեղայի եկավ,– շարունակում է Սմբատը,– խոստանալով անգամ մըն ալ նման արարքներու մեջ չգտնըվիլ: –Գնդակահարե զիս հակառակ պարագային,– ըսեր էր ան[48]:

Նկ. 6. Հրայր Դժոխք (Արմենակ Ղազարեան): Արևմտահայ հեղինակավոր քաղաքական գործիչներից է:

Այս դեպքից շատ չանցած՝ տեղի է ունենում Սուլուխի կռիվը: Ըստ Սմբատի, Գևորգը հյուրընկալվում է Սաղոյենց տանը, Ռուբենը՝ Կոլանի Ստեփանի, Գալեն և Մշեցի Ռուբեն.նը (Ռուբեն Տոնիկյան)՝ Զենոյենց: Հետևյալ օրը երկու սուրհանդակները՝ Ալոն ու Աշոն լուր են բերում, թե մատնված են, և զորք է ուղարկվում Սուլուխ: Պատրաստվում են կռվի: Այնուհետև Սմբատը հետևյալն է գրում. «Գևորգ երկարորեն քննելե վերջ բանակը տեսավ, որ զայն առաջնորդողը ուրիշ մարդ չէր, եթե ոչ իրեն այսքան ծանոթ և մտերիմ Քեռսե Բինբաշին, որի հետ բարեկամության ուխտ էր ըրեր:

–Զկրակե՛ք,– հանձնարարեց Գևորգ իր զինվորներուն: Եթե կարողանաք այսպես կես ժամ շահիլ, կը մթնե և կրնանք քաշվիլ մեր թաքստոցները՝ լեռները: Զկրակեք, սպասեցեք միայն անոնց հարձակման.

48. Նույն տեղը

–Բանակին դանդաղ ընթացքը տեսնելով, Ռուբեն կը մոտենա Գևորգին։

–Ինչո՞ւ այսօր թուրքական զինվորները արագ չեն։ Երևի Քեոսե Բինբաշին կը հրամայե, որպեսզի կարողանանք պատրաստվելու ժամանակ շահել։

Մինչ այդ կամուրջի կողմեն կրակը կը սկսի։ Կռվի ազդանշանը տրված էր։

Մեկ ժամ վերջ՝ Գևորգ կուզե կրկին քննել թշնամի բանակին դիրքը, կը տեսնե, որ Քեոսե Բինբաշին պաստառ մը ձեռքը կընթանա դեպի առաջ։ *Կը հիշէ անմիջապես իրենց միջև գոյացած համաձայնութիւնը։ Բայց հազիվ պատրաստ իր կարգին զայն դիմավորելու, Քեոսե Բինբաշին ծանրապես վիրավոր կիյնա գետին։ Ջարնված էր ֆետայինեռեն։*

Գևորգ ժամանակ չունեցավ ավելին տեսնելու։ Բախտի չարագուշակ մեկ դիպվածով... ինքն ալ կը տապալեր գետին՝ կրնակեն զարնված։

Արդ, ինչպես հաստատվեցավ հետո, որ այդ պահուն Գևորգին ճիշտ ետևը և շատ մոտ կը գտնվեր միայն Ռուբեն, որուն թշնամական զգացումները Գևորգի հանդեպ ծանոթ էին բոլորին *(ընդգծումները՝ հեղինակի)։ Գնդակը կռնակեն մտնելով՝ ձախ ծիծն էր ծակած։ Երկու ժամ ևս տևեց կռիվը ու գիշերը իջավ։ Ֆետայիները եկան հավաքելու ընկած հերոսներու դիակները»*[49]*։*

Սուլուխի կռվի այս նկարագրութիւնը լի է հակասութիւններով և քննադատութեան չի դիմանում հետևյալ պատճառներով։ Նախ՝ ըստ Սմբատի ստացվում է, որ կռիվն սկսվել է մութն ընկնելուց ընդամենը մեկ ժամ առաջ, որը ոչ մի փաստով չի հաստատվում։ Բացի այդ, երբ Բինբաշին հարձակվում է, Գևորգը հանձնարարում է ընդամենը կես ժամ չկրակել, որից հետո կմթնի և կհեռանա։ Բայց ի՞նչ է կատարվում՝ անցնում է մեկ ժամ, հետո կրկին թշնամու դիրքը քննող Գևորգը նկատում է ճերմակ պաստառով Բինբաշուն, որից շատ չանցած վերջինս խփվում է հայդուկներից։ Բայց չէ որ Գևորգի ուզած կես ժամն արդեն անցել էր

---

49. Նույն տեղը, էջ 313-319

և մութն ընկել, էլ ինչո՞ւ նա հեռանալու հրաման չէր տվել: Գուցե հայդուկները չեն լսել նրան և հակառկվելով կրակե՞լ են: Բայց այդ դեպքում ինչո՞ւ համաձայն մյուս տեղեկությունների, նրանք հեռացել են մթից օգտվելով: Այնուհետև, ըստ Սմբատի, ստացվում է, որ Բինբաշին խփվել է, երբ արդեն մութ էր: Այդ դեպքում կրկին հարց է առաջանում՝ ինչպե՞ս նկատեցին նրան հայդուկները և խփեցին: Եվ վերջապես, եթե Բինբաշին ճերմակ պաստառով էր, այդ ինչպե՞ս եղավ, որ Գևորգը այդ չնկատեց, երբ դեռևս մութը չէր ընկել, այլ միայն մեկ ժամից, երբ համաձայն Սմբատի վարկածի արդեն կես ժամ էր, ինչ մթնել էր: Չէ որ Բինբաշին որպես հրամանատար արշավելու էր զորքի սկզբից: Կասկածից զերծ է, որ այս պատմությունը շինծու է: Իսկ Սմբատի՝ Ռուբենի կողմից Գևորգի թեկունքից խփվելու վարկածին անդրադառնալուց առաջ, հարկ ենք համարում անդրադառնալ Սուլուխի կռվի վերաբերյալ Հ. Սարգսյանի նկատառումներին: Վերջինս գրում է, թե իբր Գևևորգին Տարոնից հեռացնելու Ռուբենի ձգտումների ձախողումից հետո, կյանքի է կոչվում նրա ամուսնության խնդիրը, որը քննելու համար ժողով է գումարվում նախ Մառնիկի անտառում, ապա Սուլուխ գյուղում: Իսկ թե ինչու Սուլուխում, Սարգսյանն իրեն հարց է տալիս և իր իսկ հարցին հետևյալն է պատասխանում. «Այդ գյուղումն էր ապրում Աղյուծ Սերոբի եղբոր որդի Զըռոն, որի հորը սպանել էր Գևորգը, քանի որ սպանվածը Աղյուծ Սերոբի հարստության տիրանալուց հետո Սերոբի կնոջ օրապահիկը տալիս էր, բայց երբ Աղյուծ Սերոբը Բասենում իր երկու զավակների հետ նահատակվում է, այնուհետև ոչինչ չի տալիս... Սուլուխի ժողովի Գևորգի ամուսնության խնդիրն է արծարծում... Գևորգը ասպետին հատուկ կեցվածքով, լուռ լսողի դերում է մնում, նա շատ լավ հասկանում էր, թե դավադրաբար ինչ նպատակ է հետապնդվում, ուստի համբերությունը սպառված, խիստ զայրացած օրը ցերեկով իրեն նետում է դուրս և սկսում փողոցներն արագ շրջագայել, ինչը որ շատ անսովոր էր: Ժողովուրդը նրան տեսնելով՝ իրար է անցնում: Գևորգը հանկարծ հանդիպում է գյուղի թուրք աղային. վերջինս ուռենու տերևի նման սկը-

սում է դողալ և լեզուն բռնվումէ: Գևորգը նրան հանդարտեցնում է՝ ասելով:

–Կյանքիդ վտանգ չկա, պայմանով, որ իսկույն ձի նստես, մեկնես քաղաք ու հայտնես, որ ես այստեղ եմ,– և հեռանում է:

Թուրք աղան իսկույն մեկնում է և հայտնում»[50]:

Սուլուխ գյուղում Գևորգի ամուսնության խնդրով ժողով գումարված լինելու մասին Հ. Սարգսյանի այս պատմությունը հորինված է և դա ժխտում է դաշղալթաղցի Համազասպ Տեր-Խաչատրյանը, որը գրում է.

«Մեզի համար նորություն է ասիկա և ոչ տրամաբանական: Կըսենք ոչ տրամաբանական այն հիմունքով, որ Դուրան Բարձրավանդակի որևէ ներկայացուցիչ և իրավասու մարմին ներկա չեն եղած Սուլուխի ժողովին, եթե ժողով ըսվելու արժանի հանդիպում կա: Ֆետայական խմբին մաս կը կազմեին միմիայն շարժական ֆետայիներ, այսինքն համեստ կռվողներ, որոնք որևէ որոշում տալու իրավասություն չունեին»[51]:

Հ. Սարգսյանը այսպես է նկարագրում Սուլուխի կռիվը: Նախ՝ նա սխալվում է գրելով, թե Գալեն Հակոյի և Հասանոյի հետ ուղարկվել է կամրջի դիրքը: Գալեն կռվի ժամանակ եղել է Գևորգի կողքին: Այնուհետև, երբ զորքը կրկին հարձակման է անցնում, և կռիվն ընդունում է կատաղի բնույթ, «Այդ միջոցին ալիզոնանցի ծուռ Մքոն դիրքից բարձրանում, նշան է բռնում և կրակում է, հազարապետին ձիուց գլորում է ցած, որից հետո հարձակման թափը կոտրվում է»[52]:

Կռվի ընթացքում թշնամու գնդակը դիպչում է Մքոյի հրացանի փակաղակին (զատվոր): Նա հրացան է ուզում նախ Գևորգից, որը պատասխանում է՝ «համբերիր, թերևս ճարվի»: «Կռվի ընթացքին Մքոն տեսել էր,– շարունակում է Հ. Սարգսյանը,– որ Ռուբենը մուտք էր գործել Զըռոյի տուն, ըստ ոմանց ասության հախուռն Մքոն գնում է նույն տունը և Ռուբենից հրացան է պահանջում և ավելացնում. «Քանի որ դիրքում չես, մոտիդ հրացանը ժամանակով տուր ինձ»: Իբր

50. «Սփյուռք», N 7, 28 փետրվարի, 1972
51. Նույն տեղը, n 13, 4 ապրիլի, 1971
52. Նույն տեղը, N 9-105 14 մարտի 1971

թե առանց նրա համաձայնության փորձում է հրացանը վերցնել, նրա անկարգապահ ընթացքը Ռուբենին վիրավորում և խիստ զայրացնում է, այդ պատճառով Ռուբենը՝ վրեժխնդիր և անողոք մինչև վերջ, անգամ մահից հետո նրան հալածանքի է ենթարկում»[53]:

Այս դրվագը նույնպես շինծու է, որովհետև այդ ահեղ կռվի ժամանակ, երբ թշնամին Ռուբենի դիրքից, ուր գտնվում էր նաև Մքոն, ընդամենը մի քանի քայլ էր հեռու, հնարավոր չէր, որ Մքոն հասներ Գևորգի դիրքը և նրանից հրացան ուզեր, կամ Ռուբենը գնար Զըռոյի տուն: Բայց սա դեռ բոլորը չէ: Հ. Սարգսյանը ըստ երևույթին համոզված լինելով Ռուբենի կողմից Գևորգին թիկունքից խփելու վարկածի համոզիչ չլինելու մեջ, հետևյալն է հորինում. «Հրամանատար Չերքեզ հազարապետի սպանվելուց հետո,– գրում է նա,– կռվի թափը թուլանում է և զինվորները ընկրկում են: Հայդուկները գյուղի երեք ճակատների վրա դիրք բռնած կռիվ են մղում, վիրավորվում է միայն Գևորգը, որին ընկերները իջեցնում են ցած՝ թոնրատուն. նա անխնամ մնալով՝ արյունահոսությունը նրան խիստ թուլացնում է: Հետագայում բերնեբերան շշուկներ են տարածվում, որ Գևորգը թիկունքից է խփվել, գնդակը, երբ մարմնին կպչում է, տեղը հազիվ նկատելի է լինում, բայց դուրս եկած տեղը մեծ վերք է առաջացնում (ընդգծումը մերն է– Ա. Ն.): Խոսվում է, որ խփողը Զըռոն եղած է, բայց նա ինքնագլուխ և առանց զորավոր պաշտպանի երբևէ չէր համաձայնվի նման մի քայլ անել: Տարօրինակ և զարմանալի զուգադիպությամբ նույն միջոցին Արածանի գետի կամուրջի գլուխ դիրք բռնած և կռիվ մղող Գևորգի անբաժան պահապան հրեշտակներ սպաղանցի Գալեն և Խարսա Հակոն սպանվում են: Մնում է քյուրտ Հասանոն (Խասըմ բեկի ղոլամը), որը իր տեղը մնում է և դիրքը չի լքում»[54]:

Այս բոլորից ինչ հետևություն: Նախ՝ Հ. Սարգսյանը վկայում է այսպիսով, որ Գևորգին խփվելուց հետո իջեցնում են թոնրատուն (ավելի շուտ ինքն է իջնում), ուր արյունա-

53. Նույն տեղը
54. Նույն տեղը

հոսությունից թուլանում է, քանի որ խնամող չկար։ Իսկ ինչո՞ւ, որովհետև կռիվն այնքան կատաղի բնույթ էր կրում, որ ոչ մեկը հնարավորություն չուներ նրանով զբաղվելու։ Հարց է առաջանում՝ այդ պայմաններում հնարավո՞ր էր, արդյոք, որ Մքոն ազատ հասներ Գևորգի դիրքը և հրացան ուզեր, կամ Ռուբենը մտներ Զըռոյի տունը։

Երկրորդ. Զըռոյի կողմից Գևորգին թիկունքից խփելու վարկածը հեղինակը հորինել է հետևյալ պատճառով։ Մի կողմից ծանոթ լինելով Սմբատի հուշերին, ըստ որոնց Գևորգին խփել է Ռուբենը, նա հավատացել է նրան, բայց մյուս կողմից էլ հնարավոր չհամարելով, հորինել է Զըռոյի վարկածը։

Երրորդ. Հ. Սարգսյանի վերևում ընդգծած նախադասությունը, մեր կարծիքով, վերջնականապես բացահայտում է Գևորգ Զաուշի սպանության առեղծվածը և Սմբատի վարկածի առաջացման պատճառը։ Ինչն է հիմք տվել Սմբատին՝ ընթադրելու, որ թիկունքից է խփվել Գևորգը։ Մեր խորին համոզմամբ՝ թիկունքի վերքի առկայությունը։ Գնդակը ձախ կրծքից մտնելով՝ անցել է աջ թիկունքից, որտեղ ավելի մեծ վերք է առաջացրել։ Իսկ դա մի կողմից և Գևորգ-Ռուբեն տարաձայնությունները մյուս կողմից հիմք են տվել ենթադրելու, որ Գևորգին թիկունքից խփել է Ռուբենը (1908 թ. սահմանադրությունից հետո հանձնաժողովն այդ մասին համապատասխան եզրակացություն է կատարել, որին կանդրադառնանք քիչ հետո)։

Սմբատը Ռուբենի կողմից Գևորգի խփվելու վարկածը հետևյալով է հիմնավորում։ Նախ, նա գրում է, որ այդ մասին հայտնել է Ղասըմ բեկը։ Նրա հուշերում կարդում ենք. «Մինչև մոտ ամիս մը՝ իր ներումը (թուրք կառավարության կողմից– Ա. Ն.) Գևորգի սպանության մասին ոչ մեկ բան կարտահայտեր Ղասըմ բեկը։ Բայց հետո սկսավ տարաձայնել, թե Զավեն, Սեյդո և Ջնդո իրեն ըսած են իրենց մեռած օրն իսկ, երբ միատեղ եղած են, թե Գևորգին մահացու հարվածը ուրիշ մարդե չէր կրնար գալ, եթե ոչ Ռուբենե։ Ինքն ալ իր կարգին նույն եզրակացությունը հաստատող կասկած մըն էր ունեցած, նկատելով, որ Ռուբեն իրեն այ-

ցելություններ չէր տար, ինչպես նախապես Գևորգին մահե վերջ[55]:

Եվ սա Սմատը գրում է Ղասըմին Սեյդոյի ու Ջնդոյի սպանության մեջ մեղադրելուց և այդ սպանությունը հետևյալով պատճառաբանելուց հետո. «Ըրավ այդ բանը (Ղասըմը –Ա. Ն.) կարողանար ըսել տալու համար, թե իրապես կապ չունի հայ «հրոսակներու» հետ և թե իրապես ուրեմն արժանի է ներման: Արարք մը պետք էր երևույթները փրկելու համար[56]:

Հարց է առաջանում՝ ինչպե՞ս կարելի էր համոզվել Ղասըմի ասածների ճշտության մեջ, երբ այլևս չկային նրա կողմից սպանված Ջավենը, Սեյդոն և Ջնդոն: Չէ որ Ղասըմը կարող էր այդ զրպարտությունը հորինել իր դավաճանությունն արդարացնելու համար: Հակառակ դեպքում ինչո՞ւ նա այդ լուրերը չէր տարածում մինչև վերջինիս սպանությունը: Իսկ ինչ վերաբերում է այն հարցին, թե ինչո՞ւ Ռուբենը Գևորգի սպանությունից հետո չի այցելել Ղասըմին, ապա մի՞թե հնարավոր էր դա այն դեպքում, երբ կառավարությունն ամենուրեք հետապնդում էր նրան և բացի այդ՝ չէ որ Ռուբենը Ղասըմին կասկածում էր մինչև Սուլուխի կռիվը: Այնուհետև, Սմբատը վերոհիշյալ վարկածը հետևյալով է հիմնավորում: Սահմանադրությունից հետո Տարոնում Դաշնակցության նոր ներկայացուցիչ Գարմենի (Մկրտիչ Մելքոնյան) նախաձեռնությամբ ընտրվում է կենտրոնական կոմիտե, որի մեջ մտնում էին սասունցի Մանուկը, Պոլեի Մճոն, Հաջի Հակոբը, Կարնենի Մկրտիչը, Շահրիկյանը, Արոն և Սմբատը: Կոմիտեն քննում է երեք հարց՝ Գևորգի սպանության, Մ. Բդեյանի գեղծարարության և հողային հարցերը: Հարցերը քննելուց հետո գումարվում է ընդհանուր ժողով: «Հուզումը մեծ էր պատգամավորներուն մեջ,– գրում է Սմբատը, երբ կարգը եկավ Գևորգի սպանության պարագաներուն: –Հոն էր անոր դիակին մերկ լուսանկարը, որ ավելի կը նպաստեր բնականաբար տիրող հուզումը խորացնելու: Շրջանային ժողովը նկատելով այս պարագան, որ կրնար ան-

55. Մ. Երիցանց, Սմբատի հուշերը, էջ 323
56. Նույն տեղը, էջ 322

համեմատորեն մեծ հոսանքներու հասնիլ, որոշեց հինգ հոգանոց հանձնախմբի մը կազմությունը, որ առարկայորեն հավաքելով ամեն վկայություն, վերջնական արժեք ներկայացնող եզրակացության մը հանգի։ Հանձնախումբը դիմեց այն ֆետայիներու վկայության, որոնք Գևորգի կողքին կռված էին վերջին անգամուն ու ծանոթ էին մանրամասնորեն ոչ միայն Գևորգին, այլև յուրաքանչյուր կռվողին մարտական դիրքին՝ ընթացքին։

Դիմեց Ղասըմ բեկի և քյուրտերուն՝ Ավզոտ գյուղացի Մալխասի միջոցով ու հասավ այն եզրակացության, թե Գևորգը մահացնող դավադիր ձեռքը Ռուբեն Տեր-Մինասյանն է։ Այս որոշմամբ կը չքմեղանար նաև սոլուխցի Սամոն, որ կամբաստանվեր իբրև մեղսակից Գևորգը սպանողին։ Հակահարվածը մեծ պիտի ըլլար ժողովականներու մեջ ի լուր սույն եզրակացության։ Հանձնախումբը կանխատեսեց այս բանը ու բավականանալով միայն իր կազմին ավելացնելով Զավարյանը, տոքտ. Զավրիևը, Վարդան Վարդապետը, Պոլոյան Մկրտիչը, Սասունցի Մանուկը և զիս։

Խորհրդակցաբար ամենքը որոշեցին գաղտնի պահել Գևորգի սպանության պարագաները՝ ժամանակի ընթացքին կարելի մոռացություն մը տալու համար»[57]։

Ի՞նչն է անհամոզիչ այստեղ։ Առաջին. Սմբատը չի նշում, թե Գևորգի մերկ մարմնի լուսանկարը ինչպիսի կոնկրետ հետք է ցույց տվել։ Բայց, անշուշտ, նրա թիկունքին հետք է եղել, ինչը նպաստել է վերոհիշյալ վարկածի հիմնավորմանը։ Մի բան պարզ է, որ հետաքննությունից առաջ լուրեր եղել են, որոնք ստիպել են գնալու դրան։ Բայց այդ վերքը պարզապես այնտեղից դուրս եկած գնդակի հետևանք էր։ Որ Գևորգ խփվել է կրծքից, այդ հաստատվում է ուրիշ փաստերով ևս, որոնց քիչ հետո կանդրադառնանք։ Կարող է հարց առաջանալ՝ իսկ ինչո՞ւ քննող հանձնախումբը նման եզրահանգման չի եկել։ Կարծում ենք հետևյալ պատճառով. Գևորգ Զաուշի դավադրաբար խփվելու լուրերը նրա թիկունքին եղած վերքի առկայության դեպքում հիմնավոր են թվացել (ընդգծումը մերն է– Ա. Ն.)։ Երկրորդ. Սմբատը դարձյալ փորձում

57. Նույն տեղը, էջ 325-326

Նկ. 7. Իսո Կորյուն։ Հրայրի հավատարիմ հետևորդն է։ Դատապարտվել է 101 տարվա բանտարկության, սակայն փախել է

է վարկածը հիմանվորել Ղասըմ բեկից վերցված տեղեկություններով, մի անձնավորություն, որը միշտ փորձել է դավել Գևորգին, և որին չի վստահել Ռուբենը։ Երրորդ Գևորգի թիկունքից խփվելու վարկածը ուրիշ ոչ մի աղբյուրով չի հաստատվում։ Մ. Բդեյանը, որի հարցը ըստ Սմբատի նույնպես քննել է նույն ժողովը, իր աշխատության մեջ բոլորովին չի հիշատակում Գևորգի նման սպանության մասին։ Նա Սուլուխի կռվում նրա խփվելու մասին հետևյալն է գրում.

«Դժբախտաբար Գևորգ Զաուշը մահամերձ ըլլալու աստիճան ծանրօրեն կը վիրավորվի»[58]:

Զորրորդ. Սմբատը գրում է, որ որոշել են «գաղտնի պահել Գևորգի սպանության պարագաները՝ ժամանակի ընթացքին կարելի մոռացության մը տալու համար»: Սակայն, դրանից ոչ շատ առաջ գրել է, որ Ռուբենը Սուլուխի կռվից հետո «... կը ծածկեր ինքզինքը և կը փախեր իբր եղբայրաղավ սպանիչ՝ ժողովրդին ու մարտիկներուն մեղադրական զայրույթեն»[59]: Ստացվում է, որ ժողովուրդն այդ մասին տեղյակ էր: Էլ ինչո՞ւ և ումի՞ց էին որոշել գաղտնի պահել:

Եվ վերջապես, Սմբատի հետևյալ միամիտ նախադասությունը ոչ մի կասկած չի թողնում Գևորգի սպանության՝ նրա վարկածի անհիմն լինելու վերաբերյալ: «Ամեն ոք, հայ թե քյուրդ,– գրում է նա,– տխրությամբ մը համակված մեծ հուզումով ու զարմանքով կը հարցնեին իրարու, թե ինչպե՞ս կրնար ըլլալ, որ նման հերոս մը սպանվի»[60]:

Պարզ է, որ Գևորգի՝ առասպելական այդ անձնավորության թշնամու գնդակից անխոցելի լինելու առասպելը մղում էր ընթադրելու, որ նա դավադրության զոհ էր:

Կ. Սասունին Գևորգի սպանության այս վարկածի վերաբերյալ տրամաբանական դիտողությունն է արել. «1908 թ. աշնան Կովկասեն Մուշ վերադառնող մարտիկներեն ոմանք լուրեր տարածեցին, թե Գևորգը սպանված է Ռուբենի գնդակով: Հնարած սուտ մըն էր, որ բերնե բերան հաճախ կրկնվեցավ: Հոս պարտք կզգամ հայտնիլ, թե գործին մեջ մնացող և հեղափոխական գործին մասնակից որևէ տարոնցի այս կարծիքը չի ունեցած: Անձամբ 1912-ին Սուլուխ գտնված եմ և Սուլուխի կռվի մասնակից 30 ֆետայիներ խոսեցնել տված եմ, դիրքերն ու տեղերը ճշտած եմ: Այսպիսի կռիվ մը, որ մեկ վայրկյան գլուխ բարձրացնելու հնարավորություն չունեին կռվողներ և իրենց կյանքը ամենեն ստույգ մահվան ենթակա էր, դավաճան հոգի ունեցողն իսկ պիտի

58. Սարգիս և Միսակ Բդեյաններ, Հարազատ պատմություն Տարոնո, Գահիրե, 1962, էջ 236
59. Զոր. Սմբատի հուշերը, էջ 321
60. Նույն տեղը

չկրնար այդպիսի քայլ մը անել։ Հնարած սուտ մըն է, որ այպանելով կը հերքենք»[61]։

Կ. Սասունու ճշմարտացիութիւնը կասկած չի հարուցում։ Այդ հաստատվում է թե՛ Ռուբենի հուշերով և թե՛ մի նամակով, որի հեղինակն ամենայն հավանականությամբ նույն Ռուբենն է, և որը լույս է սփռում շատ կարևոր հարցերի վրա։ Նամակի տակ տրված է «զինակից ընկեր, որը Սուլուխի կռվի նկարագրությունը տալիս է այնպես, ինչպես Ռուբենն իր հուշերում»։ Նամակի ընթերցումը համոզում է, որ նրա հեղինակը Ռուբենն է, և գրել է այն կռվի թարմ տպավորության տակ։ Նամակում նախ խոսվում է կռվին նախորդող դեպքերի մասին. «Կառավարությունը շուտոնց թակարդ կը պատրաստեր, որ հանգուցյալ Գևորգ Չաուշին ծուղակը գցեր. նա մեզ առանձին-առանձին չէր մոտենար, այլ երկուսիս իրար հետ։ Ցրոնք գյուղում պետք է պատահեր այս դժբախտությունը, որի համար դիտավորյալ հավար արեցին, բայց որովհետև մենք բաժան էինք, զորք չեկավ, մյուս օրը մենք միացանք Սուլուխ գյուղում, դավադիրներն ունեին իրենց մարդը և այդ գյուղում, ուստի, վարպետությամբ լուր տվին և այնպես քողարկեցին, թե մեր բարեկամ տաճիկը գնաց մարնից (ըստ երևույթին պետք է լինի մատնեց– Ա. Ն.)[62]։

Այստեղից պարզ է, որ նախ՝ միանգամայն ճիշտ էր Ռուբենը, երբ ձգտում էր Գևորգի շուտափույթ Կովկաս անցնելուն, երկրորդ՝ նրանք իրոք առանձին-առանձին եղել են Ցրոնքում և ապա անցել Սուլուխ, և երրորդ՝ կառավարությունը դիտավորյալ է լուր տարածել, թե Գևորգի բարեկամ թուրքն է մատնել նրանց։ Ուստի սխալվում են բոլոր այն հեղինակները, որոնք գրում են, թե Գևորգն է ինչ-որ թուրքի միջոցով լուր տվել իրենց Սուլուխում գտնվելու մասին։

«Ժամը 8-ին զորքը հասավ գյուղը,– կարդում ենք այնուհետև,– և մենք նոր հասկացանք մեր պաշարվելը։ Ընդամենը մենք 11 հոգի էինք զինվորով և մի քյուրտ բարեկամ

61. Պատմություն Տարոնի աշխարհի, պատմագրեց՝ Կ. Սասունի, Պեյրութ 1956, էջ 701
62. «Կովկասի առավոտ», N 21, 14 հոկտեմբերի, Թիֆլիս, 1907

Հրսե անունով։ Հազիվ կար բոլորիս վրա 2400 փամփուշտ։ Գևորգ Չաուշը նախ առաջարկեց կռվելով հեռանալ լեռները, բայց Կուռավա զորքի պատճառով չհամաձայնվեցինք»[63]։

Այս փաստը, որը հաստատվում է Ռուբենի հուշերով, ցույց է տալիս, որ իրոք Գևորգը ձգտել է խուսափել կռվից։ Սրանով մեկ անգամ ևս հերքվում է, որ Գևորգն է լուր ուղարկել կառավարությանը։ Եթե նա կռիվ էր ուզում, այդ դեպքում ինչո՞ւ էր փորձում խուսափել։

«Լուսահոգին ինքը որոշեց դիրքերը,– շարունակում է նամակագիրը,– կամուրջի վրա երեք հոգի, Քյուչուկի տանիքը–ինքը և 3-ը, նրա առաջի խապան ես և 3-ը, իսկ Ամետի տանիքը 1-ը և 3 գյուղացի, և երկու գյուղացի էլ պահեստ»[64]։

Այստեղից պարզ է, որ Ռուբենի դիրքը ավելի առաջ էր ընկած, քան Գևորգինը, ինչը և բացառում էր նրա կողմից Գևորգին թիկունքից խփելու հնարավորությունը։

«Ժամը 8-ից 20 րոպե անց,– գրում է Ռուբենը,– հրացանները պարպեցին Դուրան դաշտի վրա, ասկյարների քոմի մեջ 150 քայլ հեռավորությամբ։ Կրակը թափվեց. հյուճում էր (հարձակում– Ա. Ն.)։ Քեռսե Բինբաշու առաջին հարձակումը, ըստ տաճկական տեղեկության, եղավ 500 հոգով, կը կրակեին Вч лички և կրակի տակից կը գային առանց կրակելու։ Գևորգ Չաուշ կամ ինչես ընկերներն անվանում էին Սարհատ և տղերքը կը գոռային։ Սարհատ, ախ, Սարհատ, մռնչյունը կը կազդուրեր բոլորիս։ Թըշնամին 5 վայրկյանից հասավ հրացանի փողի առջև, բոցն էլ կը հասներ նրանց։ Դժվար էր, բայց չէին վախենար տղերքը։ Մեր ուժերը կենտրոնացնելով՝ նրանց խաչաձև հյուճումը կանգնեցրինք ընդամենը 5–20 քայլ հեռավորությամբ։ Կրակը պակասեցրին՝ նոր ուժով հարձակվելու համար։ Ժամը 9-ին կուզեր 20 րոպե, զարկին առյուծ Գալեին քունքից։ Երկրորդ հյուճումն սկսվեց, 9-ին կուզեր 10 րոպե զարկին «Ղոլ Գել», «Ղասաբե մերան», «Գևորգե կնե» Գևորգ Չաուշին՝ ծծի տակից։ Վիրավոր առյուծը իրեն կը գցե տանիքից և նրա տեղ տեսանք բռնված է ասկյարներով»[65]։

---

63. Նույն տեղը
64. Նույն տեղը
65. Նույն տեղը

Այսքանից հետևում է. առաջին, կռիվն իրոք այնքան կատաղի բնույթ է կրել և Ռուբենի դիրքին թշնամին այնքան է մոտեցել, որ նրանք հնարավորություն չէին կարող ունենալ մեկ վայրկյան իսկ դադար առնելու կամ ուրիշ ուղղությամբ կրակելու: Երկրորդ. Գալեն խփվել է կռիվը սկսելուց (8 անց 20 րոպե) ընդամենը 20 րոպե անց (8 անց 40-ին), իսկ Գևորգը՝ կրծքից կես ժամ անց (8 անց 50-ին)՝ Գալեի խրփ վելուց 10 րոպե անց: Վիրավորեվելուց անմիջապես հետո նա տանիքից իջնում է:

Նամակի շարունակությունից պարզ է դառնում, որ Բինբաշին խփվել է Գալեի և Գևորգի խփվելուց հետո, մի հանգամանք, որով ժխտվում է Սմբատի այն տեղեկությունը, ըստ որի Գևորգը տեսել է, թե ինչպես է խփվել Բինբաշին: Բինբաշու խփվելու ժամանակ Գևորգն իջել էր տանիքից: Ահա նամակի շարունակությունը. «Կռիվն ավելի տաքացավ. սկըսվեց տասնոցների կռիվ. ճակատ առ ճակատ կիյնային շատ դիակներ. Սարհատի տանիքի վրա խուրձ-խուրձ էին փռված թշնամիք, զորքը վախեցել էր, զինվորական փողերը հյուճում կը փչեին, բայց լսող չկար: Ժամը 9-ին հասավ Կուրավու զորքը՝ 120 հոգի, բայց կամուրջը փակել էին Հըսեն, Հովո և մի գյուղացի: Ձիավորներն եկան Առինջվանքու և Նորշենա, քրտերն եկան լեռներից, նոր զորք եկավ Մշուց. կը թանձրանար ու կը թանձրանար, և բոռիներ կը փչեին հյուճում, զորքը վախեցել էր. Քեոսեն առաջն ընկել էր և տանիքներից սուրը մեզ ցույց կտար. տղայքը համազարկ տվին և նա ընկավ վիրավոր մի քանիսի հետ, նորից, երբ բարձրացավ՝ նա և մի տեսակ շոր հագած միլազըմ իրար հետ մնացին տանիքի վրա մեր կրակներից. թշնամին կոտրվեց, սկսեցին փախչել, միայն երկու տանիք իրենց ձեռքը մնաց. տղերքը նոր հույս առան, սկսվեց սալավաթ նորից և տաղերն ու խաղերը մեր կողմից, հուսահատ ուրախություն...»[66]:

Այսպիսով հետ է մղվում նաև թշնամու երկրորդ գրոհը, որի ընթացքում զոհվում է Քեոսե Բինբաշին: Հաստատվում է Ռուբենի հուշերի այս տեղեկությունը, ըստ որի Բինբաշին ընկել է ընդհանուր համաազարկից: Երկրորդ գրոհին հաջորդած

66. Նույն տեղը

նահանջից հետո թշնամին կանգ է առնում 50 քայլի վրա՝ խանդակներում: Այնուհետև, կրկին հարձակվում է և կռիվը շարունակվում է մինչև երեկո: «Երեկոյան սկսվեց հարձակում մեր կողմից Սարհատի դիրքի վրա,– կարդում ենք նամակում,– որի տակ էր պաշտելի վիրավորը և Գալեի դիակը: Մեզ հաջողվեց քշել տանիքից (թշնամուն– Ա. Ն.) և հանել վիրավորներին, ձիաներ պատրաստել էին, դրեցինք մի ձիու վրա, բայց ձին տակը զարկվեց և ընկավ, դրինք մյուսի վրա և գյուղն ամբողջ դատարկելով շնչավորներից, սկսեցինք հեռանալ զինվորական կարգապահությամբ (ավանգառթով, միջինով և ասինագառթով): Թշնամին մեզ կը զարներ մթով, բայց մենք կը հեռանայինք առանց կրակելու: Սարհատը դեռ հոգով էր, նա կը չարչարվեր մահվան ճիրանների մեջ, կը գոռար ու կաղաչեր սպանել իրեն, մենք չէինք լսեր և կը փախցնեինք նրա թանկագին դիակը շալակով. ձին այլևս չկար. թշնամին կը հետևեր: Սարհատ կը հասկնար այդ, նրա վերջին աղաչանքն եղավ, տար և խումբն ազատիր, իմ պատճառով միք կոտորվի, նրան քիչ էլ տանելով դրինք մի հերկի մեջ, ծածկեցինք կանաչներով և երեք մարդ դրինք պահապան և հեռացանք, որ դագաղ ուղարկելով տանինք Ղաշղալթաղ»[67]:

Այս բոլորը նույնությամբ, բայց ավելի մանրամասնորեն նկարագրված է Ռուբենի հուշերում: Ուրեմն, մենք ոչ մի հիմք չունենք նրան մեղադրելու դեպքերը խեղաթյուրելու մեջ: Սոսկ զարմանալի է, որ նամակում նա գրում է ոչ թե տկեր, այլ դագաղ ուղարկելու մասին: Հարց է առաջանում՝ ինչո՞ւ: Կարծում ենք, որ հետևյալ պատճառներով: Գևորգին թողնելով խոտերի մեջ և գնալով դագաղ ուղարկելու, Ռուբենն ու ընկերները, անշուշտ, մտածել են, որ այդ ընթացքում նա կմահանա: Սակայն, փաստ է, որ Գևորգը մահացել է հաջորդ օրը՝ արշալույսին: Ուստի, մենք համոզված ենք, որ Ռուբենը իր հուշերում գրել է, որ գնացել են ոչ թե դագաղ, այլ տկեր ուղարկելու, քանի որ Գևորգի մինչև հաջորդ առավոտ կենդանի եղած լինելու փաստը հիմքեր կտար իրեն մեղադրելու նրան լքելու մեջ: Մյուս կողմից չպետք է մոռանալ,

67. Նույն տեղը

որ թշնամու հետապնդման պայմաններում Ռուբենն ու ընկերները չգիտեն, թե որն է ավելի ճիշտ Գևորգի ապահովության համար՝ նրան եղեգնուտում թողնել, թե՞ իրենց հետ տանել: Չէ որ նետվելով գետը, նրանք չգիտեին՝ փրկվելու են թե ոչ: Այնուհետև, նամակում կարդում ենք. «5,5-ին հազիվ հասանք այդ գյուղը և հանեցինք մարդիկ, բայց մեր հետևից զորքը 6,5-ին այդ տեղը կը շրջապատե թնդանոթներով: Մենք արդեն հեռացել էինք, կը բռնեն դաշտից մեր դրած երեք պահապաններին, որոնցից մեկը կը մատնե և ցույց կտա Գևորգին, որին կը գտնեն անշնչացած ու դիակն առնելով կը տանին Մուշ և կը թաղեն Գուրգենի կողքին»[68]:

Հեղինակն այստեղ դժբախտաբար չի նշում, թե երբ են գտել Գևորգին, բայց նրա վերջին րոպեների մասին ահա, թե ինչ է գրում ղաշղալթաղցի Հ. Տեր-Խաչատրյանը: «Մեր գյուղի դաշտային պահակ քյուր Ալոն (մեր գյուղի Իբրահիմ բեկի տղան) մեր գյուղեն դեպի Սուլուխ շամբի և ճլնոցի եզերքեն անցած պահուն տքոցի ձայն մը կառնե: Կը մոտենա և դժվար կը գտնե ձայնին տեղը: Կը տեսնե, որ Գևորգ Զաուշն է, Գևորգ ջուր կը խնդրե, քյուրտ Ալոն, որ իրեն լավ ծանոթ էր, կը դժկամի տալ, որովհետև վիրավորին ջուր տալ լավ չէ: Գևորգ կը պնդե: Գևորգ կառաջարկե, որ իր գլխարկի մեջ ջուր առնելով բերե իրեն: Այդ ձևով Գևորգ իր ծարավը կը հագեցնե ու կը մահանա»[69]:

Մի բան կասկածից վեր է, որ Գևորգի պահապանները լքել են նրան: Նրանք այդ արել են ավելի շատ վախից դրդված, քան թե դիտավորությամբ: Միգուցե նրանք համոզված են եղել, որ Գևորգի մահն անխուսափելի է: Այնուամենայնիվ ա յս արարքը ոչնչով չի արդարացվում:

Ամփոփենք. Սուլուխի կռվում Ռուբենի կողմից Գևորգի սպանության վարկածի ծագման հիմնական պատճառները հետևյալն են.

Առաջին. Գևորգ Զաուշին Կովկաս հեռացնելու Ռուբենի ջանքերը, որոնք բխում էին ժամանակի պահանջից և հայ ազգային-ազատագրական պայքարի կազմակերպման խըն-

68. Նույն տեղը
69. «Սփյուռք», N 13, 4 ապրիլի 1971

դիրներին Հ. Հ. Դաշնակցության ունեցած նոր մոտեցումներից։

Երկրորդ. Գեորգ Զաուշի թիկունքի վերքի առկայությունը, որն իրականում այնտեղից դուրս կեած գնդակի հետևանք էր։

Երրորդ. Ռուբենի հայդուկային շարժումները Տարոնում բացառելու և հայդուկներին այնտեղից հեռացնելու քաղաքականությունը, որն էլ ավելի որոշակիացավ Սուլուխի կռվից հետո։

Իսկ ինչո՞ւ հնարավոր չէր, որ Ռուբենը խփած լիներ նրան։ Հետևյալ պատճառներով.

Առաջին. Ռուբենն առնվազն իր իսկ մահը տենչացող պետք է լիներ, խփելով Գեորգին, որովհետև վերջինիս դիրքի գրավումով թշնամին անցնելու էր իրենց թիկունքը, որի դեպքում մահն անխուսափելի էր։ Գալեի և Գեորգի խփվելուց հետո այդպես էլ եղավ, և միայն Էլոն կարողացավ Ռուբենի հրամանով փրկել դրությունը։

Երկրորդ. Գեորգի մահվանը ձգտող Ռուբենը բոլոր հիմքերն ուներ նրան Սուլուխում թողնելու և ոչ մեկը նրան չէր կարող մեղադրել դրանում, բայց նա հրամայեց մահվան գնով իրենց հետ վերցնել Գեորգին։

Սուլուխի կռիվը ճգնաժամ ապրող հայդուկային շարժման վերջին դրվագն էր։ Գեորգ Զաուշի մահով փաստորեն ավարտվում էր անկրկնելիորեն հերոսական, բայց սակավարդյունք այդ շարժումը։

ՎԵՐՋ

Ներսիսյան Ա. Ա.

Գևորգ Չաուշի սպանության առեղծվածը: Եր.: Հայաստան, 1992.– 51 էջ

Հեղինակը՝ պատմաբան Աշոտ Ներսիսյանը, իր «Գևորգ Չաուշի սպանության առեղծվածը» գրքում գիտականորեն և սեղմ ոճով ընթերցողին է ներկայացրել հայդուկյան շարժումը՝ 1904-1907 թվականներին. սա այդ շարժման վերջին փուլն է: Շարժման գլխավոր դեմքի՝ Գևորգ Չաուշի մղած մի քանի մարտերը թռուցիկ նկարագրելուց հետո, հեղինակը ավելի մանրամասն ընթերցողին է ներկայացնում Սուլուխի կռիվը: Գևորգ Չաուշը զոհվում է այդ կռվում: Սկիզբ են առնում տարբեր լուրեր նրա մահվան շուրջ: Հեղինակը բարձրացնում է այդ բոլոր կարծիքները և գիտականորեն բացատրում դրանց սխալականությունը:

Ընթերցվում է մեծ հետաքրքրությամբ:

ՀՅԴ Հանրային Կապերի Գրասենյակ
2021

ՀԱՎԵԼՎԱԾ

1- Գէորգ Չաւուշի նամակը Արեւելեան Բիւրոյին
2- Գէորգ Չաւուշի նամակը Անդրանիկին եւ Սուրատին
3- Արամ Մանուկեանի գրութիւնը Խորհուրդին
4- Մարալի բողոք-նամակը Խորհուրդին
5- Ռուբէնի նամակը Ռոստոմին եւ Ակնունիին
6- Գ. Չաւուշի առթիւ. (Ռուբէնին, Սասուն)

[illegible]

[illegible]

[illegible]

25 Նոյեմբեր 1906
Բիւրակն

Արեւելեան Բիւրոյին,

Նոյեմբեր ամսոյ 4ին ընկեր մըն ալ հետս եկայ Բիւրակն եւ պիտի գայի արտասահման, հասնէի [Ընդ]հանուր Ժողովին, բայց ձիւնի բուքի պատճառաւ արգիլուեցայ 15 օր Բիւրակն. եւ օր մըն ալ քուրդ վալատի հետը միասին մեկնուեցանք որ պիտի գայինք. եւ հասանք մինչեւ Կուկէի Պարազան (?). այստեղ սկսեց ձիւն գալ, սաստիկ քամի եւ բուք. ճար չգտնելով ետ վերադարձանք. բայց խեղդուելէն ահզիւ հազ ազատուանք. անկէ զկնի աշխատեցայ Բարձրաբերդի[1] գծով գալ ծպտեալ, սակայն ոչ ոք յանձն չառաւ զիս տանելու. եւ ինչպէս ալ Բիւրակնի[2] ընկերներ գրած են, ճարահատ մնալով ետ վերադարձայ դէպի Դուրանում, շատ ցաւալով, որ բաղդ չունեցայ գալ եւ ներկայանալ ձեր ազնիւ Ժողովին։ Սակայն խնդրում եմ որ զմեզ այստեղ մտահան չանէք. արդէն գրած ենք զբոլոր Երկրի անց ու դարձը եւ Երկիր ինչ պահանջելը. նաեւ շատ մը գաւառների տեղեկագրները որ ստանում էք, կարդալով պիտի հասկանաք զմանրամասնութիւնը։

Գալով Ժողովի առթիւ երբ ես չկարողացայ գալ, ես այստեղէն տալիս եմ ձայն Պարոյրին եւ Մուրատին, որ նրանք լաւ ծանօթ են Երկրի դիրք եւ դրութեան. եւ արդէն մենք պարզած ենք զամէն մի հարցը Երկրի գործունէութեան մասին։

Իմ վկայական էլ ղրկեցի. եւ իմ որոշուած անձերը որ որոշած եմ եւ ձայնս նրանց տուած եմ. լի յուսով եմ՝ պիտի ընդունէք, եւ զմեզ պիտի ճանչնաք իբրեւ ընկեր, եւ ապստամբավայրը՝ տեղը։

Համբոյրներով՝
ՍԱՐՀԱՏ

1.Կարնոյ

2.Նամակի ձեռագրով, այս տեղանունը կարելի է կարդալ Բերակ, Բիրոկ եւն.։ Պէտք է ըլլայ Բիւրակն (Պինկէօլ), ինչպէս կը հետեւցուի ի մասնաւոր Տատրակի (Մշոյ Գեղամի) նամակէն։

«Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան Պատմութեան Համար», Դ. հատոր (4-րդ), էջ 12-13

Սիրելի Պարոյր[1] եւ Մուրատ,

Ես որոշուեցայ որ պիտի գայի արտասահման ու ներկայանայի [Ընդհ]հանուր Ժողովին, սակայն բաղդը չօգնեցոր գայի եւ ներկայանայի այն ազնիւ Ժողովին, եւ տեսնուէի ձեր սիրելութեան ու շատ մը ընկեր[ների], այն պատճառաւ որ ձիւնի բուքի արգելքներ չթողին ու գայի եւ հասնէի: Ինչպէս օր մը օրերէն քիւրտ վալատի մը հետ մեկնուեցայ որ գայի. Հասանք մինչեւ Կուլէի Պորազան[2]. Հոն սկսեց սաստիկ ձիւն, եւ բուքի բռնուելով ետ վերադարձանք: Մենք 7 ձիաւորով, ճարահատ մնալով վերադարձանք կրկին Դուրանում[3], շատ մը ...երով (?):

Ընկերներ, Ժողովին համար՝ երբ որ ես բաղդ չունեցայ գալ եւ ներկայանալ այն ազնիւ Ժողովին, բայց ձայնս տուի ձեզի որ ներկայանաք Ժողովին եւ մեր կողմանէն խօսիք եւ ծանուցումներ տաք Երկրի մասին, ինչպէս ալ որ գրած եմ Արեւելեան Բիւրոյին, որ դուք պէտք է ներկայանաք Ժողովին եւ խօսիք մեր ու երկրի մասին, թէ Երկիր ինչ է պահանջում. բայց չուրանաք (?) զձեր Աստուած եւ զէդ Երկիրը ինչպէս ուրացել էք մինչեւ ցարդ. թէ ինչպէս Բարձրաւանդակ[4] ու Տարօն, որ ամենէն աշխատող ու գործ տեսնող եւ շատ մը զոհեր տուող [շրջանն է], նրա տրամադրութեան ներքոյ ոչ մի դրամ չկայ, իսկ Շամի[5] տրամադրութեան ներքոյ կայ 80000 ոսկի, նաեւ կայ 100000ից աւել ծայրեր. իսկ մերը՝ ոչինչ. ո՞ւմ երեսէն, ձեզի պէս ընկերների երեսէն որ թողեցիք զմեզ եւ զԵրկիր Աստծու կրակի մէջ ու գնացիք[6], ոչ դրամ ոչ էլ ռազմամթերք ղրկեցիք, զմեզ եւ զձեր ժողովուրդը թողեցիք ձեզ անիծող: Ինչ որ է, այն անցաւ. բայց այսուհետեւ կ'աշխատէք որ դուք ալ եւ մենք մարդ լինենք, Երկրով միասին:

Եղբայրք ճան, խնդրեմ լաւ աշխատէք որ օգուտ մը հասցնէք այստեղի ժողովրդեան եւ գործին, որ ազատուէք նրանց մեղքէն:

Համբոյրներով՝
ՍԱՐՀԱՏ

1.Անդրանիկի կուսակցական ծածկանունը

2.Կրնայ ըլլալ նաեւ Կալէ Պարազան կամ Կալեէի Պարազին

3.Տարոնի շրջանը

4.Սասուն

5.Վասպուրական

6.Կակնարկէ Անդրանիկի, Մուրատի եւ միւս հայդուկապետներու արտասահման մեկնումին, Սասնոյ ապստամբութենէն ետք։

«Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան Պատմութեան Համար», Դ. հատոր (4-րդ), էջ 9-11

Ընկերներ!

Վերջերս պատահական կերպով անցաւ Մշոյ դաշտ. ցաւօք սրտի լսեցինք մի շատ վրդովեցուցիչ լուր, որ պատիւ չի բերում ո՛չ միայն յեղափոխական ընկերներին այլ եւ սովորական քաղաքացիներին։ Խնդիրը այս է. մեր նահատակ ընկեր Գէորգ Չաուշի սպանուելու ցաւատանջ իրողութիւնը ձգտում կայ վերագրելու մեր շարքերին կամ այս-ան ընկերոջ։ Հասկանալի է որ սա կարող է տխուր գործողութիւնների դռներ բանալ եթէ մի հեղինակաւոր մարմին իրողութիւնները քննելով չասէ իր վերջին խօսքը։

Չգիտեմ այդ լուրը ումի՞ց կամ ինչպէ՞ս է տարածուել մեր շրջաններում. բայց ընկերներ՝ Մուրադ, Սեպուհ, Աւետիս, Առաքել եւ ուրիշ շատերը բաժանելով կամ հաւատ ընծայելով այդ լուրերին սկսել են քննութիւններ կատարել, վկաների կանչել եւ որոշ ռապորտ կ'ուզեն կազմած այդ խնդրի շուրջը։

Ինչպէս ես հասկացայ մեր ճանապարհորդութեան մէջ ընկեր Մուրադից, խնդիրը առանձնապէս դառնում է այդ շրջանում եղած մեր գործիչ ընկերներից Ռուբէնի եւ Փիլոսի[1] շուրջը։

Իբր թէ այդ երկուսի անձնական թշնամութիւնը դէպի Գէորգ Չաուշը նրանց տարել է [այն] աստիճանին, որ նրանք ժողովրդի եւ մեր զինուորների մէջ այնքան ատելութիւն են ստեղծել, որ բնականօրէն կարող է ուրիշ անգամ կամ հէնց վերջին Սուլուխի կռուի ժամանակ Գէորգի կռնակէն ստացած վէրքը լինել մեր ընկերների կողմից։

Որ իբր թէ նման փորձեր եղել [են] եւ ուրիշ անգամ բայց անյաջող է անցել. օրինակ Մուրադը պատմում է որ Խնուսում՝ Առնոս գիւղում կազմակերպութեան զէնքերով տեղական ընկերները զինուել են դիմադրելու Գէորգին եթէ նա փորձ անէր այնտեղի դաւաճաններից մէկին գիւղի մէջ զարկել. իբր թէ այդ կատարուել է առնուազը Փիլոսի լուռ համաձայնութեամբ...

Չեմ ուզում երկարացնել. չեմ էլ ուզում իմ կողմից ոեւէ բան աւելացնել այդ իրողութիւնների մասին. թէեւ ինձ համար շատ բաներ պարզուեց իմ հոն լինելու հետեւանքով. դա դատական գործի հետեւանքը կը պարզէ ամէն ինչ։

Այս խնդիրը ինձ համար շահեկան է այն տեսակէտից, որ այդ կողմերում եւ մեր ընկերական շատ շրջաններում վերոյիշեալ ընկերներ (Մուրադ եւ ընկ.) այդ ուղղութեամբ խօսում են եւ թէ իրենք ու թէ լսողները բաւականաչափ, եթէ չասեմ ամբողջապէս հաւատում են պատմուած լուրերին։

Ուրեմն ի պատիւ մեր ընկած ընկերոջ յիշատակին եւ ի փրկութիւն մեր ներկայ ապրող գործիչ ընկերների վարկին, խնդրում եմ միջամտել, այս առթիւ մի վերջնական եզրակացութեան գալու։

Անշուշտ ցաւալի է որ հակառակ Ընդ. Ժող[ովի] որոշման դուք նորէն ստիպուած էք միջամտելու դատական գործերի. բայց իրողութիւնների հետ պիտի հաշտուենք։

Ես անպայման կողմնակից չեմ մեծ աղմկարար դատերի եւ վիճաբանութիւնների այս խնդիրների շուրջը. բայց քանի որ երկու կողմի մարդիկն էլ ներկայ են, ուստի լաւ կը լինէր գէթ բացատրութիւններ առնելով փակել այդ հարցը։

Այլապէս մեր անձնական սենպատիաներով ու անտիպատիաներով պէտք է առաջ բերենք մեր շարքերում ու ժողովրդի մէջ մի պրաւոկացիոն վիճակ, որը կը ծնէ ինչպէս վերեւ ասացի շատ ցաւալի դէպքեր...

Ընդունեցէք սիրելի ընկերներ իմ ջերմ ողջոյթները ձեր դժուարին աշխատանքների եւ տանջանքների համար։

Ընկերական բարեւներով

1909 թ. Սեպտ. 3
Կ. Պոլիս

ԱՐԱՄ

1. Մուրադը Սեբաստացի Մուրատն է, Ռուբէնը՝ Տէր Մինասեան, իսկ Փիլոսը (այլապէս նաեւ Մարալ, Հրաչեայ Մարալ) իսկական անունն է Փափախեան Փիլոս

«Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան Պատմութեան Համար», Է. հատոր (7-րդ), էջ 114

Հ. Յ. Դաշ[նակցութեան] Խորհուրդին

Ընկերներ!

Վերջին ժամանակներս ընկերների շրջանում լսում է մի խուլ շշուկ, մասնաւորապէս իմ եւ Ռուբէն Տարոնացու շուրջը, վերագրելով մեզ մի դեր՝ մի դաւադրութիւն, որը վերջերս հասաւ արդէն մինչեւ Խորհուրդին։

Վասպուրականի ընկերներից Արամը, յատուկ մի բողոքագրով դիմել էր Ձեզ արդէն Խորհուրդի միջոցաւ, քննելու յիշեալ խնդիրը եւ ճշմարտութիւնը հրապարակ հանելու համար։ Չգիտեմ սակայն ինչ պատճառներով մեր մասին գրուած այդ գրութիւնը մի կողմ է դրուել, առանց քննելու գրուածքի իմաստը։

Մեզ վերագրուած դաւադրութեան մասին, այն է՝ հանգուցեալ Գէորգ Չաուշի անձի դէմ, ոչ թէ միայն հասարակութեան մէջ է խօսւում, այլ խօսւում, եւ նոյնիսկ քննութիւններ է բացւում մեր ընկերական շրջանակում, ընկեր Մուրատի կողմից, որը ինչպէս երեւում է խօսուածների ճշմարտութեան մասին կատարելահ համոզմունք գոյացնելոց յետոյ, ինքնակոչ կերպով ստանձնել է նաեւ դատաւորի պաշտօն, որի ապացոյցն է Խնուսում իր կատարած քննութիւնները իմ վերաբերմամբ։

Ես իմ ամբողջ էութեամբ բողոքում եմ ընկեր Մուրատի այս վարմունքի դէմ եւ խնդրում եմ որ Խորհուրդը զբաղուի այս խնդրով, քննի եւ ճշմարտութիւնը հրապարակ հանի, որովհետեւ երբ ընկերներն են այսպիսի մի դաւադրութեան մասին համոզմունք կազմել եւ դեռ քննութիւններ էլ կատարել, հասկանալի է թէ հասարակութիւնը ինչպիսի վերաբերմունք ցոյց կը տայ։

Չմոռանամ ասել որ իմ դէմ մասնաւորապէս այս խնդր համար Կարնոյ ընկերներից մէկին Փետր. ամսին գրուած էր մի նամակ, Խնուսից, վերագրելով ինձ դարձեալ նոյն դաւադրութիւնը, որի մասին ես նոյն ժամանակներին յայտնել եմ նոյն տեղի ընկերներին, բայց որոնք էլ ոչ [մի] ուշադրութիւն չեն դարձրել։

Համոզուած լինելով որ այս խնդիրը մնալով այս դրութեան մէջ,

գնալով պիտի համոզմունք դառնայ միամիտ հասարակութեան մէջ, երբ մանաւանդ յեղափոխական ընկերներն են նոր զարկ տալիս նրան, եւ չուզենալով երբեք որ ընկերասպան անունը – ժողովրդի կողմից թէկուզ – գրուած լինի իմ ճակտին, ես բողոքում եմ այս տարաայնութիւնների դէմ, եւ խնդրում եմ որ ճշմարտութիւնը Խորհուրդիդ միջոցաւ հրապարակուի գոնէ Մշոյ դաշտի եւ այլ տեղերի ընկերներին ու հասարակութեան:

Ես յոյս ունիմ որ Խորհուրդիդ քննութեան ժամանակ կը պարզուի ամէն ինչ, ինչպէս նաեւ մեր վերաբերմունքը դէպի հանգուցեալ Զաւուշը:

Յարգանօք

24 Սեպտ. 909 ՄԱՐԱԼ
Պոլիս

«Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան Պատմութեան Համար», Է. հատոր (7-րդ), էջ 115

Սիրելի Ռոստոմ, Ակնունի,

Ձեզ յայտնի է, որ Գէորգ Զաուշի սպանութեան մասին մի գործ կայ Խորհրդում, որ անտես առնելը անհնար է եւ վնասակար. ես իմ կողմից հարկ չհամարեցի պաշտօնապէս այդ խնդիրը իմ կողմից յարուցանել, քանի որ առանց այն էլ խնդիրը յարուցուած էր ամենաւոր ընկերների կողմից եւ մանաւանդ եղել են ընկերներ, որոնք իրականութեան մէջ կարեւորութիւն են տուած այդ խնդրին, եւ որոշ քննութիւններ են կատարած եւ եկած որոշ եզրակացութեան, որի մասին բացի լուրերից պաշտօնապէս տեղեկութիւն չունիմ: Ընկեր Ռոստոմը մինչեւ վերջին օրը կանգնած էր այն տեսակէտի վրայ, որ այդ խնդիրը կարելի է փակել իմ եւ Մուրատի բացատրութեամբ: Թիւրիմացութիւնները պարզելու համար այդ եղանակը գուցէ ամենամաքուր եւ ամենայեղափոխական ճանապարհն է, բայց ի նկատի առնելու է մի հանգամանք, որ Դուրանից[1] իմ բացակայութեան ժամանակ այդպէս չեն վարուել ընկերները ինձ հետ եւ ինչպէս հասկացած եմ Տատրակից եւ Արամից[2] եւ ուրիշներից, նրանք «պաշտօնական» քննութիւն են կատարել այդ մասին եւ ունեն որոշ եզրակացութիւններ, որ ինձ անյայտ են. խնդիրը այդ աստիճանի հասնելուց յետոյ, կարծում եմ իմ կողմից միամտութիւն կը լինէր առկախ թողնել այդ հարցը եւ նախանձախնդիր չլինել իմ եւ նրանց պատուի հանդէպ, որոնք մեղադրուել են իբրեւ ընկերասպաններ: Եւ ձեզնից խնդրում եմ, ոչ թէ միայն յանուն Գէորգի յիշատակի արտաւորուելու եւ յանուն մեր պատուի, այլեւ այն ցաւոտ երեւոյթի, որ վերջերս կազմակերպութեան մէջ սովորում են բամբասանքով վարկաբեկել, տապալել ընկերների, չգիտեմ յանուն ինչի՞:

Սիրելի Ռոստոմ, եթէ դուք կարողանայիք հաւատացնել, որ այդ խնդրով ընկերները զբաղուել են, որովհետեւ իսկապէս պարտաւոր էին, եւ ոչ թէ ընկերները իրանք ցանկացել են խնդիրներ,նոր եւ նոր հարցեր ստեղծել եւ այդ փոքրիկ ինտրիկներով վարկաբեկել ընկերներին, ես համամիտ կը լինէի ձեզ հետ: Ես այլ կերպ եմ հաւատացած, եւ դրա համար խնդրում եմ Խորհրդի մէջ եղած խնդիրը անտես չառնել եւ ձեր վրայ վստահանալով կը պահանջեմ անաչառ քննութիւն.

I- Թէ ինչպէ՞ս է սպանուել Գէորգ Զաուշ
II- Ո՞վ եւ որտեղի՞ց է այդ ընկերներից ,սպանմանե լուրը առաջ բերել (եթէ իրօք Գ. Զ. թշնամուց է սպանուած):

Առաջին հարցի մասին ես իմ բացատրութիւնը տուած եմ մանրամասն կերպով 907 Յունիս, Ա[բեւելեան] Բ[ուրոյին] գրած նամակովս, ուրիշ բան չունիմ աւելացնելու։ Երկրորդ հարցի մասին ես ունիմ իմ որոշ հաւատը, բայց աւելորդ եմ հաշտում գրելը, աւելի լաւ է կը սպասեմ ձեր քննութիւններին, որից յետոյ արդէն պիտի կարողանամ սրանից յետոյ կամ վստահանալ մտնել յեղափոխական գործիչ մէջ եւ կամ հեռանալ, այդպիսի սոսկալի վարկաբեկումներից խուսափելու համար։-

Կարծում եմ, որ դուք պէտք է մտնէք իմ դրութեան մէջ եւս եւ քննութեան նիւթ պիտի դարձնէք այդ խնդիրը։

Բարեւներով

1909 թ. 16 Հոկտ.
Բեռն

ՌՈՒԲԷՆ

1. Տարօնից
2. Տատրակը՝ Գեղամ Տէր Կարապետեանն է, Արամը՝ Մանուկեան

«Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան Պատմութեան Համար», Է. հատոր (7-րդ), էջ 116

6

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

190 .....

ԺԸՆԵՎ — GENÈVE

№ [redacted]

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

1890

FÉDÉRATION RÉVOLUTIONNAIRE ARMÉNIENNE

DASCHNAKTZOUTIOUN

Գ. Զաւուշի սպանութիւն

[illegible]

Խորհուրդը նկատի առնելով դրական փաստերի կատարեալ բացակայութիւնը՝ հրահանգում է Մշոյ Կ. Կ.-ին պաշտօնական ազդով հերքել այդ անհիմն լուրերը Գ. Զաւուշի սպանութեան իբր թէ «մասնակից» մեր ընկերների մասին։

Ստորագրութիւններ

[Ստացուած 1909 թ. 27-ին Դեկտ.ի]

«Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան Պատմութեան Համար», Է. հատոր (7-րդ), էջ 117



www.arfd.am/lib

Էլեկտրոնային այս հրապարակման գրաշարությունը, էջադրումն ու ձևավորումը կատարեց ՄԵՒԱԿ ԱՐՈՅԵԱՆ:

ՀՅԴ Հանրային Կապերի Գրասենյակ
2021